AZG NEW 1.QXD 7/31/2009 10:20 PM Page 1

Azg Ազգ

1 ՕԳՈՍՏՈՍ 2009 ՇԱԲԱԹ 144 (4280)

ISSN: 1829-1651

Օգոստոսին եղանակը 35 աստիճանից չի բարձրանա

«Հայիդրոմետ» ծառայության օդերեւութաբանության կենտրոնի ղեկ **Զարուհի Պետրոսյանին** «**Ազգը**» խնդրեց մեկնաբանել, թե ինչպիսի եղանակ է սպասվում օգոստոսին: Օգոստոսի 1-ին, 2-ի գիշերը շրջանների մեծ մասում, 3-ին եւ 5-ին՝ առավելապես արեւելյան շրջաններում (Լոռի, Տավուշ, Սյունիք) սպասվում են անձրեւ, ամպրոպ, կարկուտ, իսկ առանձին վայրերում՝ ֆամու ուժգնացում մինչեւ 20 մ/վրկ արագությամբ: Օգոստոսի 4-ին սպասվում է առանց տեղումների եղանակ: Օդի ջերմաստիճանը ամսվա սկզբին կնվազի մինչեւ 4 աստիճանով, իսկ 3-ին՝ նույն չափով կբարձրանա՝ մինչեւ 31-35 աստիճան ողջ ամսվա ընթացքում: Օգոստոսի երկրորդ տասնօրյակն առաջինի հետ համեմատ կլինի կայուն, տեղ-տեղ տեղումներ: Երեւանում միջին ամսական ջերմաստիճանը կլինի սկզբում 25-26, իսկ ընթացքում մինչեւ 35 աստիճան՝ տարբեր վայրերում տեղումներ, Արարատյան դաշտում՝ 9-14 մմ: Կարկուտի հավանականությունը վերջին տասնօրյակում փոքր է:

«Ի՞նչ կարծիքի եք, Հայաստանի նախագահն, այնուամենայնիվ, Թուրքիա կգա՞»

«Ազգի» խմբագրությանն է դիմում թուրքական հեռուստատեսությունը

Հուլիսի 30-ին թուրքական Haberturk հեռուստատեսության «Լուրեր» ծրագրի գլխավոր թողարկման ժամանակ, հաղորդավարը, պարզաբանելու համար ՀՀ նախագահի՝ ֆուտբոլային պատասխան խաղին առնչվող հայտարարությունները, ուղիղ եթերում հեռախոսով դիմեց «Ազգ»-ի թուրքագետ մեկնաբան Հակոբ Չաֆրյանին: Բնականաբար, հարցազրույցը թուրքերեն էր, հետեւաբար հենց Հ. Չաֆրյանին դիմեցինք այն վերարտադրել:

- Պարոն Չաֆրյան, Հայաստանի նախագահի ֆուտբոլային պատասխան հանդիպմանն առնչվող վերջին հայտարարությունները լայն արձագանք չգտան Թուրքիայում, իհարկե նաեւ չխախուսվեց, որ գտնեն: Ինչպիսի՞ն է հայ հասարակության վերաբերմունքը այդ հայտարարություններին:

- Նախագահ Սարգսյանի հայտարարությունները լայն արձագանք չեն գտել նաեւ Հայաստանում, քանի որ նա մինչ այդ նման հայտարարություններ արդեն արել էր: Սակայն Թուրքիայի հետ մերձեցման գործընթացին նրա ցուցաբերած աջակցությունը հակազդեցություն է առաջ բերել երկրում եւ աջակցության պատճառով կառավարող կոալիցիայի անդամ Դաշնակցությունը դուրս է եկել կառավարության կազմից: Այսինքն, բուն խնդիրը ֆուտբոլային հանդիպման համար երկրի նախագահի Թուրքիա գնալ-չգնալը չէ, այլ Թուրքիայի հետ Հայաստանի մերձեցումը: Ներկայումս Հայաստանում այդ մերձեցման դեմ գոյացել է ազդեցիկ ընդդիմություն:

Տես էջ 2

ՇՈՒԿԱ

GSP+-ը մրցակցային առավելություններ է ստեղծում Հայաստանի համար

Էկոնոմիկայի փոխնախարարը համակարգը ներկայացրեց գործարարներին

Եվրոմիության սահմանած արտոնությունների GSP+ համակարգից, որը թույլ է տալիս զրոյական կամ զգալիորեն նվազեցված մաքսատուրքերով ապրանքներ արտահանել Եվրոմիության երկրներ, ի թիվս 16 երկրների, այս տարվա հունվարի 1-ից մինչեւ 2012-ի հունվարի 1-ը օգտվում է նաեւ Հայաստանը: Արտոնությունների համակարգը հայ գործարարներին ներկայացնելու նպատակով երեկ տեղի ունեցած սեմինարի ժամանակ այդ հարցը մանրամասնեց էկոնոմիկայի փոխնախարար Վահե Դանիելյանը: Նա մասնավորապես նշեց, որ այս համակարգը Հայաստանի համար մրցակցային առավելություններ է ստեղծում այն երկրների նկատմամբ, որոնք ձգտում են իրենց ապրանքներն արտահանել Եվրոպա: Նրա խոսքերով, Հայաստանում արտադրվող ապրանքների ավելի քան 50 տոկոսն ընդգրկված են այս համակարգում: Միաժամանակ, փոխնախարարը հիշեցրեց, որ այդ համակարգին միանալու համար Հայաստանը չպետք է մոռանա 27 միջազգային կոնվենցիաներով ամրագրված նախապայմանների մասին, որոնց մեր երկիրը միացել է: Դրանք ՄԱԿ-ի եւ Աշխատանքի միջազգային կազմակերպության սահմանած նախապայմաններ են, որոնք վերաբերում են մարդու իրավունքներին, աշխատանքային հիմնական չափանիշներին, շրջակա միջավայրին եւ կառավարման սկզբունքներին:

GSP+ համակարգը հնարավորություն է տալիս դրանից օգտվող երկրներին մոտ 6400 ապրանքատեսակներ ԵՄ շուկա արտահանելու արտոնյալ մաքսատուրքերով: Ծխախոտի համար կիրառվում է 52 տոկոս նվազեցված մաքսատուրք, բնական հյութերի համար՝ 30 տոկոս, մրգերի համար՝ 20 տոկոս, բանջարեղենի համար՝ 14 տոկոս, ձկնամթերքի համար՝ 20 տոկոս, մեղրի համար՝ 17 տոկոս: 2007-ից ի վեր, ինչ Եվրոպական հանձնաժողովը սահմանել է արտոնությունների այս համակարգը, ԵՄ շուկա արտահանողները 357 մլն դոլար պակաս մաքսատուրք են վճարել:

Ա. Մ.

«Չնայած Դավութօղլուի կարողություններին, հոգեվարք է ապրում Անկարա-Երեւան մերձեցումը»

Այդ մասին նախավերջին համարում գրել է անգլիական «Էկոնոմիստ» հանդեսը: Գովերգելով Ահմեդ Դավութօղլուի դիվանագիտական կարողությունները, հարեւանների հետ խնդիրները «զրոյական» մակարդակի իջեցնելու ջանքերը, համարելով նրան Թուրքիայի ամենաազդեցիկ արտգործնախարարներից, «Էկոնոմիստը» միաժամանակ նշում է. «Սակայն ապրիլին հայ-թուրքական մերձեցումը սրեց ադրբեջանցիների հետ Անկարայի հարաբերությունները, եւ զայրացած Ադրբեջանը հունիսին բնական գազի մատակարարման համաձայնագիր ստորագրեց Ռուսաստանի հետ: Դա նախազգուշական ազդակ էր Թուրքիայի համար, որ 180 աստիճան շրջադարձ կատարի Հայաստանի նկատմամբ վարած քաղաքականության մեջ, եւ արեւմտյան դիվանագետի դիպուկ արտահայտությամբ՝ հոգեվարքի մեջ մտավ Երեւանի հետ Թուրքիայի մերձեցումը»:

Սահմանը հատելիս անհատներին չի թույլատրվում մսամթերք եւ կաթնամթերք տեղափոխել

«Հարավկովկասյան երկաթուղի» ընկերությունը բոլոր միջոցները ձեռնարկում է գնացքում ուղեւորների հարմարավետությունը, անհրաժեշտ պայմաններն ապահովելու համար: Ինչպես «Արմենպրեսին» տեղեկացրեց ընկերության ուղեւորափոխադրումների տնօրենության պետ **Սամվել Ղալեչյանը**, աշխատանքներ են տարվում հատկապես Վրաստան մեկնող ուղեւորների հետ՝ նրանց տեղեկացնելով անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաեւ հայ-վրացական սահմանն անցկացնել չթույլատրվող սննդի տեսակների վերաբերյալ: Վրաստանի կառավարության որոշմամբ միանշանակ արգելվում է անհատների կողմից մսամթերքի եւ կաթնամթերքի տեղափոխումը ձեռքի պայուսակում, բացառությամբ մանկական կերի եւ բժշկի թույլտվությամբ նախատեսված սննդատեսակի: Վրացական կողմը դա բացատրում է նրանով, որ նման միջոցառումների իրականացման հիմնական նպատակը տարբեր վարակների տարածման կանխարգելումն է: Ալկոհոլային խմիչքներից երկու շիշ թույլատրվում է տեղափոխել, իսկ մնացած սննդի տեսակները մեծ քանակությամբ՝ ոչ: Այսինքն՝ վրացական կողմը պետք է համոզված լինի, որ դրանք վաճառելու նպատակով չեն տեղափոխվում: Ս. Ղալեչյանը նշեց, որ երկաթուղու կայարաններում փակցված են հայ-վրացական սահմանն անցկացնել չթույլատրվող սննդատեսակի ցանկը:

Մեկկվում են Արցախի զբոսաշրջային հիմնական երթուղիները

Նախապատրաստական աշխատանքներ են տարվում ԼՂՀ Շահումյանի շրջանի Զուար համայնքում հոսող բուժիչ հանքային տաք ջուրը զբոսաշրջիկների այցելության վայր դարձնելու ուղղությամբ: Ինչպես «Արմենպրեսին» տեղեկացրեց ԼՂՀ կառավարությանն առընթեր զբոսաշրջության վարչության պետ Սերգեյ Շահվերդյանը, ԼՂՀ կառավարության կողմից այս տարի այն արդեն իր շրջակա տարածքով (350 քմ) ընդգրկվել է Արցախի բնական հուշարձանների շարքում, ներկայումս աշխատանքներ են տարվում տեղանքի էլեկտրիֆիկացման, համապատասխան ենթակառուցվածքների ստեղծման ուղղությամբ: Զբոսաշրջության վարչությունը մեկկվում է նաեւ Արցախի զբոսաշրջային երկու հիմնական՝ հարավային ու հյուսիսային երթուղիները: Ըստ Ս. Շահվերդյանի՝ հարավային երթուղին անցնելու է Ստեփանակերտ-Ամարաս-Տողի մելիխական ապարանքի տարածքով՝ ձգվելով մինչեւ Արաքս գետի հովիտը, իսկ հյուսիսայինը՝ Ստեփանակերտ-Դրմբոն-Սարսանգի ջրամբար-Դադիվանք-Զուար տեղանքով՝ հասնելով Հայաստանի Հանրապետություն՝ մինչեւ Սեւանա լճի ավազանը:

Դեղին համարանիշներով տախիները կարող են մտնել Վրաստան

Ինչպես տեղեկացանք տրանսպորտի եւ կապի նախարարության մամուլի քարտուղար **Սուսաննա Տոնոյանից**, այս տարվա օգոստոսի 1-ից դեղին համարանիշներով տախի մեքենաները կկարողանան անարգել հատել հայ-վրացական սահմանը: Այդ մասին պայմանավորվածություն են ձեռք բերել «երկու երկրների համապատասխան գերատեսչությունները»:

Միաժամանակ, նախարարությունից տեղեկացանք, որ ներկայումս Հայաստանում գործում են 563 լիցենզավորված տախի ծառայություններ՝ 6792 մեքենայով եւ 605 անհատ ձեռներեցներ:

Ա. Մ.

Արման Բաբաջանյանի վաղաժամկետ ազատ արձակման դիմումին դրական ընթացք է տրվել

Հուլիսի 31-ին «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վարչական հանձնաժողովը, ի թիվս այլ դիմումների, քննել է նաեւ դատապարտյալ Արման Բաբաջանյանին պայմանական վաղաժամկետ ազատ արձակելու վերաբերյալ «Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով» անկախ հանձնաժողովին միջնորդություն ներկայացնելու հարցը եւ կայացրել է դրական որոշում: Արման Բաբաջանյանի դիմումը կներկայացվի անկախ հանձնաժողովին:

Վախճանվեց դեսպան Զիվան Թաբիբյանը

Երեկ երկարատեւ հիվանդությունից հետո մահացել է Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Զիվան Թաբիբյանը:

Զիվան Թաբիբյանը ծնվել է 1937 թվականին, Լիբանանի Բեյրութ քաղաքում: 1959 թվականին ավարտել է Բեյրութի ամերիկյան համալսարանը՝ քաղաքագիտություն մասնագիտությամբ, ապա Փրինսթոնի համալսարանը: Զ. Թաբիբյանը ավարտել է նաեւ Սորբոնի համալսարանը՝ քաղաքական սոցիոլոգիա մասնագիտությամբ եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի դիվանագիտական հետազոտությունների կենտրոնը (Փարիզ): 1962-1971 թթ. դասավանդել է քաղաքագիտություն եւ միջազգային հարաբերություններ ԱՄՆ-ի Հյուսիսային Կարոլինայի եւ Կալիֆոռնիայի համալսարաններում, նաեւ քաղաքաշինություն է դասավանդել ԱՄՆ-ի Հարավային Կալիֆոռնիայի ճարտարապետական դպրոցում: 1971-1996 թթ. կատարել է խորհրդատվական եւ հասարակական ծրագրման աշխատանքներ Մեքսիկայում, Վենեսուելայում, Գվատեմալայում, Իրանում, Արաբական Միացյալ Էմիրություններում, Հորդանանում, Քուվեյթում եւ Ճապոնիայում: 1998-2008 թթ. եղել է ԵԱՀԿ-ում, նաեւ Վիեննայում տեղակայված միջազգային կազմակերպություններում ՀՀ ներկայացուցիչ: 1999-ին Զիվան Թաբիբյանին շնորհվել է արտակարգ եւ լիազոր դեսպանի դիվանագիտական աստիճան: 2000-2006 թթ. աշխատել է Ավստրիայում, Չեխիայում, Հունգարիայում եւ Սլովակիայում որպես Հայաստանի դեսպան:

«Ազգ»-ի հաջորդ համարը կտպագրվի օգոստոսի 18-ին՝ արձակուրդից հետո:

AZG NEW 2.QXD 7/31/2009 10:21 PM Page 1

«Անկախ Հայաստանը ես եմ նախաձեռնել»



ԱԻՄ առաջնորդ Պարույր Հայրիկյանին զայրացնում է, որ արցախյան հիմնախնդրի վերաբերյալ բղավում են միայն «նորաթուխ, լեզուս էլ չի ոստվում ասել, քաղաքական գործիչները»: Ըստ նրա՝ հարցի վերաբերյալ ոեսք է մեկնաբանություններ անեն մարդիկ, ովքեր գիտեն՝ ինչ է նշանակում ինքնորոշում, Արցախի հարց: Այդ մարդը Պարույր Հայրիկյանն է կամ, ինչպես «Տեսակետ» ակումբում իրեն ներկայացրեց, «Ազգային ազատագրական պայքարի առաջնորդը»: Վերջինս նախ հիշեցրեց, որ «անկախ Հայաստանը ես եմ նախաձեռնել», այնուհետեւ սեփական մտահոգություններն արտահայտեց արցախյան խնդրի կարգավորմամբ:

Հայրիկյանի դիտարկման համաձայն, ներկայիս իրավիճակին գնահատական տալու կամ հարցերին պատասխանելու համար անհրաժեշտ է ընկալել ռազմավարությունը. մինչդեռ 90-ականների սկզբներին ձեւավորված ռազմավարությունը չորդեգրվեց:

«Որովհետեւ իշխանության եկածները կոմունիստական իշխանության վարչակարգի շարունակողներն էին, դրածներ», նկատում է Հայրիկյանն ու հարցնում, թե մեր պատկերացմամբ ինչպիսի՞ն է արցախյան խնդիրը՝ տեղական՞, թե՞ համամարդկային հարց: Այդ հարցի պատասխանը նա ունի, եւ ինչպես ինքն է ասում՝ կյանքի մեծ մասը միայն կրկնել է. «Ներազգային հարց չէ, Արցախը քմահաճույք չէ»:

Հայրիկյանը մտահոգվում է, որ մինչեւ այսօր չգիտենք, թե ովքեր են մեր իսկական բարեկամները, ովքեր՝ թշնամիները: Անդրադառնալով, մասնավորապես, Ռուսաստանին, հիշեցնում է, որ Ադրբեջանը հոխորտում է ռուսական տանկերով: «Չեն հասկանում, որ պրոբլեմը մեր գլխին փաթաթել է Ռուսաստանը», ասում է ԱԻՄ առաջնորդը:

Հայրիկյանը ավելորդ զարմանք է արտել, երբ մադրիդյան սկզբունքների 6 կետի հրապարակումից հետո Հայաստանում հիստերիայի նոպաներ է տեսել: Ըստ նրա, մադրիդյան սկզբունքներից վախենալ պետք չէ: Ընդամենը առաջարկ է, որ ոչինչ չի ասում: Կան նաեւ Հայաստանի համար շահութաբեր կետեր. «Փաստաթղթում Հայաստանը որպես օկուպանտ չի ընկալվում, բռնազավթիչ չեն ներկայացնում»: Միաժամանակ դրական է համարում արցախյան հարցի միջազգայնացումը. «Երեւույթը լրացուցիչ երաշխիքներ կտա հարցն ավելի արդարացի լուծելու»:

Հայրիկյանը վստահ է, որ այսօր Արցախում վտանգ չկա: «Իրավիճակն այնպիսին է, ինչպես 1994-ին: Նոր վտանգներ չկան: Դրանք ոչ ավելացել են, ոչ էլ պակասել»:

«Ազգի»՝ «Քաղաքական շրջանակներում ասում են, որ եթե արցախյան հիմնահարցում զիջումներ լինեն, կդիտվի որպես հաղթող պետության դիվանագիտության վախճան: Համակարծի՞ք եք», հարցին Հայրկյանը պատասխանեց. «Հայկական դիվանագիտություն պետք է լինի, որ հետո խոսենք վախճանի մասին: ՀՀ անկախության առաջին օրվանից ունեցել ենք կոմունիստների պարտադրանքը: Զիջումներ անել՝ չի նշանակում կորուստ, վախճան: Բանակցություններ՝ նշանակում է զիջել ու ստանալ: Բարեբախտաբար զիջելու բան ունենք՝ ազատագրված տարածքները», ասաց նա:

«Այսինքն՝ դուք կո՞ղմ եք, որ ազատագրված շրջանները վերադարձնեն» հարցին Հայրիկյանը պատասխանեց. «Կողմնակից եմ ազատագրելուն»:

Որպես լուծում Հայրիկյանը նախ առաջարկեց վերադառնալ արմատներին, Արցախը դարձնել բանակցային կողմ, Հայաստանի Հանրապետության իշխանություններին էլ առաջարկեց միջազգային ատյաններում աջակցել Արցախին:

ՀԱՄՍԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Մտահոգություններ խաղատների բիզնեսից

Կառավարությունն օրերս հավանություն է տվել «Շահումով խաղերի եւ խաղատների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծին, որի համաձայն 2013 թվականի հունվարի 1-ից Հայաստանում խաղատներ են լինելու միայն Ծաղկաձորում, Սեւանում եւ Ջերմուկում:

Երեկ «Հայաքի» ակումբում լրագրողների հետ հանդիպման ժամանակ Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի ղեկավար Ռիչարդ Կիրակոսյանը հայտարարեց, որ այդ որոշումը կվնասի Հայաստանի ազգային անվտանգությանը, քանզի այդ խաղատնային բիզնեսի զարգացման պարագայում մեր հարեւաններ թուրքերը, իրանցիները կգան Հայաստան՝ խաղատուն գնալու համար: Նրանց երկրներում արգելված է խաղատների գործունեությունը, եւ նրանցով կլցվի Հայաստանը: Բացի այդ, սա մի բիզնես է, որը մեր երկրում կզարգացնի կոռուպցիան:

Մյուս մտահոգությունը Ջերմուկի, Սեւանի եւ Ծաղկաձորի բնական միջավայրի հնարավոր ոչնչացումն է. «Կտրվելու են ծառեր, որպեսզի նոր շինություններ կառուցվեն, իսկ դա բնապահպանությանը մեծ վնաս կհասցնի»:

Մյուս հյուրը՝ «Բարեփոխում» հասարակական կազմակերպության նախագահ Կարինե Հակոբյանը, նկատեց. «Փչացնել, ֆանդել, ավերել փոխել եւ դրա փոխարեն ստեղծել մի բան, որն անընդունելի է, մենք այդպիսի փորձ ունեցանք Երեւանում՝ կապված քաղաքաշինական ծրագրերի հետ»:

Ըստ Հակոբյանի՝ խաղատները վերոհիշյալ վայրեր տեղափոխելով կառավարությունը հակասում է իր մեկ այլ որոշմանը: Այսինքն, մի որոշմամբ կառավարությունը մտակում է Ջերմուկի զարգացման հայեցակարգը, մեկ այլ որոշմամբ խաղատները

ցանկանում է տեղափոխել Ջերմուկ: Կարինե Հակոբյանը վստահ է, որ փոխանակ Ջերմուկի եւ նշված այլ վայրերի ռեսուրսները զարգացվեն ու աշխարհին աղահովեն այն տուրիզմով, որի կարիքը կա, առաջ է մղվում խաղատների զարգացումը:

Երկու բանախոսներն էլ կարծիք հայտնեցին, որ խաղատների բիզնեսն այն բիզնեսը չէ, որով Հայաստանը պետք է դառնա տարածաշրջանային կենտրոն: Նրանք հուսով են, որ հասարակության քննարկումների արդյունքում կառավարությունը Ազգային ժողովից հետ կվերցնի իր առաջարկը:

Ն. Մ.

«Դուլլեքս» մամուլի ակումբը խոստանում է նոր գաղափարներ, առողջ մրցակցություն

Մամիկոնյան 27 Ա հասցեում երեկ բացվեց եւս մի մամուլի ակումբ՝ «Դուլլեքս» անվանումով: Բավականին հարմարավետ, լուսավոր ակումբում ներկայացվեցին հետագա այն քայլերը, որոնցով տարբերվելու է «Դուլլեքսն» այլ ակումբներից: Շնորհանդեսին ներկա էին քաղաքական գործիչներ, ՀԿ-ների ներկայացուցիչներ, լրագրողներ: Բացման խոսքում ԺԿ մամուլի քարտուղար, «Դուլլեքս» մամուլի ակումբի կոորդինատոր **Էմանուել Մարգարյանը** նշեց, որ մեր պայմաններում տեղեկատվության նկատմամբ միշտ հետաքրքրություն է լինում, մարդիկ ցանկանում են տեսնել քաղաքական գործիչներին, լսել նոր խոսք. «Ես ողջունում եմ առողջ մրցակցությունը մամուլի ակումբների միջեւ, եւ կարծում եմ, որ այդ առողջ մրցակցությունը կստեղծի առողջ մթնոլորտ ու գաղափարներ, կլինեն հետաքրքրական բանավեճեր, կլսենք նոր տեսակետներ: Մենք պետք է ամեն ինչ անենք, որ մեզ մոտ աշխատանքը լինի համաչափ, չլինի որեւէ խտրականություն՝ լրագրողների կամ քաղաքական գործիչների առումով»:

«Ժողովրդական կուսակցության» նախագահ **Տիգրան Կարապետյանը՝** շնորհավորելով նոր ակումբի բացման առիթով, նշեց, որ լրատվությունը բեւեռացված է: Նա նշեց, որ «Դուլլեքսը» բոլորին է հյուրընկալելու, «չեն լինելու հաճելի եւ ոչ հաճելի հյուրեր», ինչպես որոշ մամուլի ակումբներում: Եվ հիշեցրեց, որ իր հեռուստաընկերությունը «Դուլլեքսում» մշտապես է լինելու:

ՆԱՒԲԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

«Ի՞նչ կարծիքի եք, Հայաստանի նախագահն, այնուամենայնիվ, Թուրքիա կգա՞»

1-ին էջից

- Այսինքն, Հայաստանի նախագահի «Թուրքիա չգալու» հայտարարությունները ներքին ազդակներո՞վ են պայմանավորվում:

- Ոչ: Որքան էլ նախագահը ենթարկվի քննադատության, այդ հայտարարությունները չի կարելի ներքին ազդակներով պայմանավորել, որովհետեւ նրա դեմ գոյացող ընդդիմությունը որոշակի դարձավ այն ժամանակ, երբ ապրիլի 22-ին հրապարակվեց Հայաստանի, Շվեյցարիայի, Թուրքիայի արտգործնախարարությունների միաժամանակյա համատեղ հայտարարությունը, ապրիլի 24-ին Բարաք Օբաման զերծ մնաց «ցեղասպանություն» բառի օգտագործումից, իսկ վարչապետ Էրդողանն այնուհետեւ սկսեց Թուրքիայի հայկական սահմանի բացումը վերսին պայմանավորել Ղարաբաղի հիմնահարցով եւ Ադրբեջանի վերաբերմունքով:

- Գուցե առաջիկա մի քանի ամիսներին առաջընթաց արձանագրվի Ղարաբաղի հարցում եւ նախագահ Սարգսյանը մտածի Թուրքիա գալու մասին:

- Առաջիկա ամիսներին որեւէ առաջընթաց Ղարաբաղի հարցում չի արձանագրվի, եւ այդ հարցը չեմ կարծում, որ առնչություն ունենա նախագահ Սարգսյանի Թուրքիա գնալ-չգնալու որոշման հետ:

- Ի՞նչ կարծիքի եք, այնուամենայնիվ, Հայաստանի նախագահը Թուրքիա կգա՞, թե՞ ոչ:

- Նա ասել է, որ Թուրքիա կմեկնի, եթե սահմանը բաց լինի կամ ստեղծված լինեն Հայաստանի ապաշրջափակման նախադրյալները: Այսինքն, Հայաստանի նախագահի ձեւակերպումներն այնքան հստակ են, որ նա, իմ կարծիքով, առանց որեւէ տեղաշարժի Թուրքիա չի գա: Ոմանք այնտեղ այս ձեւակերպումները ներկայացնում են իբրեւ նախապայման, սակայն նախագահ Սարգսյանը խոսեց նաեւ թուրքական կողմի հետ ձեռք բերված պայմանավորվածությունների մասին եւ նույն նախադասության մեջ բացահայտորեն նշեց, որ դրանք սահմանի բացումն ու շրջափակման վերացումն են: Կնշանակի թուրքական կողմը չի կատարել հայկականի հետ շփումներում ստանձնած պարտավորությունները: Այլ կերպ, նրա Թուրքիա գնալ-չգնալը պայմանավորված է հենց այդ պարտավորություններով: Ի դեպ, Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Մեթյու Բրայզան օրերս հայտարարել էր, որ դանդաղել է Հայաստան-Թուրքիա մերձեցման գործընթացը, կարծես ցույց տալու համար Հայաստանի նախագահի իրավացիությունը:

- Հայաստանում բնակչությունն ինչպե՞ս է վերաբերվում Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորմանը:

- Չնայած ընդդիմացողների առկայությանը, բնակչությունն ընդհանրապես դրական է վերաբերվում, թեեւ քաղաքական հարցերը իշխանություններն են լուծում, բայց եւ այնպես ժողովուրդը գիտի, որ աննորմալ երեւույթ է սահմանակից երկրների միջեւ հարաբերությունների բացակայությունը, եւ այդ սահմանը վաղ թե ուշ բացվելու է: Ձաֆեր բեյ, այնուամենայնիվ, կարծում եմ, ճիշտ կլիներ, որ Հայաստանի նախագահը դիվանագիտական քաղաքավարության շրջանակներում արձագանքեր նախագահ Գյուլի հրավերին եւ պատասխան այցով մեկներ Թուրքիա: Մանավանդ որ ֆուտբոլային հանդիպում դիտելու համար կատարված այցը երբեմն չի կարող պարտավորեցնող լինել: Կարծում եմ, նախագահ Սարգսյանը հայտարարություններում շտապել է:

Հ. Ջ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԸ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW 3.QXD 7/31/2009 10:07 PM Page 1

Հայաստանը համայն հայության տունն է

Սեւանա լճի ափին կայացավ ՀՀ սփյուռքի նախարարության «Արի տուն» ծրագրով Եգիպտոսից, Թուրքիայից, Վրաստանից, ՌԴ-ից, Ուկրաինայից, Ֆրանսիայից ժամանած սփյուռքահայ երեխաների ու նրանց հյուրընկալած ընտանիքների հրաժեշտի խարույկահանդեսը:

«Կամբուս» հանգստյան գոտում նախարար Հրանուշ Հակոբյանի ջերմ ու շնորհակալական խոսքերով, որոնք ուղղված էին ծրագրին արձագանքած սփյուռքահայերին, ազդարարվեց խարույկահանդեսի բացումը: Քիչ անց հայտարարվեց «հայրենագիտական մրցույթը», մասնակցողներին մրցանակներ հանձնեցին հովանավորները: Ուրախ երգուպարը տեղափոխվեց խարույկի շուրջը, եւ սփյուռքահայ երեխաներին միացավ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը: Նա նշեց, որ հաճույքով է հանդիպում սփյուռքում ապրող մեր հայրենակիցների հետ: Սերժ Սարգսյանը անդրադառնալով երկրի առաջ ծառացած պրոբլեմներին, տվեց բացատրություններ. «Առաջին անգամ հայրենիք այցելածներին կասեմ, որ դա վերջինը չլինի, այլ հաճախ այցելեք ձեր տունը, հայրենիքը: Մեր պապերը ամեն ինչ արել են, որ մեզ հասնի մեր հազարամյակների պատմությունն ու մշակույթը: Մենք պարտավոր ենք պահել ու պահպանածը փոխանցել սերունդներին եւ, որպեսզի պահպանենք, պիտի ուժ ու եռանդ ստանանք մայր հողից»:

Այնուհետեւ երեխաները պատասխանելով նախագահ Սերժ Սարգսյանի հարցադրումներին, իրենց հարցերի պատասխաններն էլ ստացան երկրի ղեկավարից: Հետաքրքրական էր Թուրքիայից ժամանած տղայի հարցը, որը տեղավորվելով նախագահի կողքին ասաց. «Խաղաղություն կուզեմ ե՛ւ Հայաստանում, ե՛ւ Թուրքիայում, ե՛ւ ամբողջ աշխարհում: Որ առաջ կուզեի հայ-թուրքական սահմանները բացվեն»: Անդրադառնալով հայ-թուրքական հարաբերություններին, Սերժ Սարգսյանը նշեց. «Մենք Թուրքիային բարի կամքի ձեռք մեկնեցինք, չնայած ցեղասպանությանը, չնայած այլ բաների, թուրքերի հետ բանակցությունների նստեցինք: Թուրքերը պետք է ընդունեն, որ մենք պետություն ունենք եւ նախապայմանի ձեւով չպիտի խոսեն 21-րդ դարում»: Նախագահի պատասխաններն ընդունվում էին ծափողջույններով:

Քիչ անց խարույկի շուրջբոլորը շրջանաձեւ, գետնի վրա տեղավորված երեխաները ջերմությամբ դիմավորեցին աշխարհի բազմակի չեմպիոններ, բռնցքամարտիկներ Վախթանգ Դարչինյանին եւ Սյուզի Քենտիկյանին: Սերժ Սարգսյանն այդ պահին անկեղծացավ եւ ասաց. «Ես մի քիչ վախենում եմ աղջիկ բռնցքամարտիկներից ու ծանրորդներից, բայց դա էլ է պետք ու հպարտ ենք նման քաջորդիներով»: Երբ նրան նվիրեցին «Արի տուն» ծրագրի խորհրդանիշ շապիկն ու գլխարկը, նախագահը անմիջապես հագավ դրանք ու շուրջպարի բռնվեց երեխաների հետ: Վերջիններս այնման էին ոգեւորվել, որ հաս-հաս լուսանկարվում էին հայոց երկրի ղեկավարի հետ: Մինչեւ ուշ գիշեր չէր դադարում տոնը, որի ընթացքում հյուրընկալ ընտանիքներին հանձնվեցին շնորհակալագրեր, իսկ մասնակից սփյուռքահայ երեխաներին՝ շնորհակալագիր, հավասագիր: Շքեղ ու գեղեցիկ հրավառությամբ ազդարարվեց «Արի տուն» ծրագրի առաջին փուլի ավարտը: Հաջորդ փուլի մասնակիցները հայրենիք կժամանեն այսօր:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ
Մեւան-Երեւան

ՀՀ սփյուռքի նախարարության ատյանի նիստում կարեւոր հարցեր քննարկվեցին

Երեկ կայացավ ՀՀ սփյուռքի նախարարության ատյանի նիստը, որի օրակարգում ընդգրկված էր 4 հարց:

Մինչ օրակարգին անցնելը նախարար Հրանուշ Հակոբյանը տեղեկացրեց ատյանի երկու անդամների փոփոխության մասին եւ նշեց, թե «Արի տուն» ծրագրի 1-ին փուլը ինչպիսի հաջողությամբ ու ոգեւորությամբ է ավարտվել նախորդ օրը, որին իր մասնակցությունն էր բերել նաեւ հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը: Ատյանի անդամներից Տիգրան Լիլոյանը, որը «Արի տուն» ծրագրի մասին նախապես հոռետեսական կարծիք ուներ, ներկա գտնվելով մի շարք միջոցառումների, կտրուկ փոխեց իր կարծիքը եւ հատուկ շնորհակալություն հայտնեց այդ բարդ ու դժվարին, նաեւ հրաշալի ծրագիրն իրականացնելու համար:

Ատյանի նիստի ընթացքում նախարարը շնորհավորեց ատյանի անդամ Լեւոն Սարգսյանի ծննդյան 50-ամյակը եւ նախարարության պատվոգիրն ու նվերը հանձնեց նրան, մաղթելով նորանոր հաջողություններ:

Օրակարգի առաջին հարցը՝ հայրենադարձության գործընթացի կազմակերպման ծրագրի նախագիծը, ներկայացրեց փոխնախարար Ս. Պետրոսյանը: Նախագիծն ընդգրկում է հայրենադարձության բարդ եւ բազմափուլ գործընթացում առկա հիմնախնդիրները՝ ներառելով նաեւ հայրենիքի եւ սփյուռքի համատեղ հետեւողական աշխատանքը, նաեւ հայրենադարձների ինտեգրումը մեր երկրի հասարակական, քաղաքական, մշակութային եւ սոցիալ-տնտեսական կյանքին: Նախագծի շուրջը ընթացավ բուռն ու ծավալուն քննարկում, արվեցին առաջարկներ:

Հաջորդ հարցը վերաբերում էր այս տարվա առաջին կիսամյակում ՀՀ սփյուռքի նախարարության աշխատանքներին եւ ստացված դիմումներին, որոնց մասին տեղեկություններ տվեց նախարարության աշխատակազմի քարտուղարության պետ Գ. Մխիթարյանը:

Օրակարգի վերջին հարցը առնչվում էր «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամի առաջիկա ծրագրերին, որոնք ներկայացրեց հիմնադրամի գործադիր տնօրեն Թամար Պողոսյանը: Նա նշեց այն բոլոր դժվարություններն ու ֆինանսական խնդիրները, որոնք ինչ-որ չափով խանգարում են նախնական աշխատանքները կազմակերպելուց: Իսկ 2010 թվականի «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական մշակութային փառատոնի նախնական աշխատանքները սկսելուց զատ անհրաժեշտ է, որ գոնե 6-8 ամիս առաջ կայացվի կառավարության որոշումը այդ մասին, քանի որ սփյուռքում ապրող մեր հայրենակիցները նախապես են պլանավորում առաջիկա տարվա իրենց ծրագրերը:

Նախարարը, որը նաեւ հիմնադրամի հոգաբարձուների ղեկավարն է, նշեց, որ պետք չէ կենտրոնանալ միայն օգոստոս ամսվա վրա եւ այդ ընթացքում իրականացնել ծրագրերը, այլ այդ ծրագիրը պետք է լինի ողջ տարվա համար ու գործադիր տնօրենից ուզեց այդ կտրվածքով լրացուցիչ ծրագրեր:

Նիստի ավարտին նախարարը տեղեկացրեց, որ մրցույթ է հայտարարվել «Երիտասարդական պալատի» սեփականատիրոջ կողմից, պալատի կառուցապատման աշխատանքների համար, եւ դրան կարող են մասնակցել նաեւ սփյուռքահայ նախագծող ճարտարապետները: Առաջին մրցանակի համար սահմանվել է 20.000, երկրորդի՝ 10.000, երրորդի՝ 5.000 եվրո:

Մ. Մ.

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Ընդդիմադիր կուսակցության ներկայացուցիչները պատերազմը չեն բացառում

Մինչ իշխանության ներկայացուցիչները, խոսելով մադրիդյան սկզբունքների մասին, վստահեցնում են, որ հաղթաթղթերը հայկական կողմի ձեռքերում են, ընդդիմության անդամները փորձում են ապացուցել ճիշտ հակառակը:

«Ժառանգություն» կուսակցության ներկայացուցիչ, ԱԺ պատգամավոր Վարդան Խաչատրյանը կարծում է, որ պատերազմի հավանականությունը բացառող հայկական կողմի երեք պատճառները իրական հիմք չունեն: «Հայկական հասարակության մեջ կարծիք է ձեւավորված, որ պատերազմ չի լինի, որովհետեւ Ադրբեջանի նավթային եւ գազային կոմունիկացիաները կոչնչացվեն: Երկրորդ, որ ադրբեջանական բանակը մարտունակ չէ, երրորդ՝ պատերազմի դեպքում աշխարհը մեզ միայնակ չի թողնի: Աշխարհը մեզ միշտ էլ միայնակ է թողել, իսկ ադրբեջանցիները միշտ էլ ավելի շատ աջակցություն են ունեցել: Ադրբեջանցիներն արդեն մոռացել են պատերազմի արդյունքները, ձեւավորվել է նոր սերունդ, որ պատերազմ է պահանջում: Այս հանգամանքի հետ չի կարող հաշվի չնստել Իլհամ Ալիեւը: Ադրբեջանցիները իրենց կոմունիկացիաների հետ կապված վտանգ չեն տեսնում: Եվ Ադրբեջանը գտնում է, որ մարտունակության առումով ինքն ունի բացարձակ գերակայություն: Նրանք չեն էլ թաքցնում, որ այս տարիներին կրկնապատկել են ծանր զրահատեխնիկան եւ զբաղվում են զենքի արտադրությամբ», Հայաստանի ժողովրդական կուսակցության գրասենյակում երեկ տեղի ունեցած քննարկման ընթացքում ասաց Վարդան Խաչատրյանը:

Այս ամենով հանդերձ՝ պատգամավորը չի մոռանում հիշեցնել, որ Արցախյան պատերազմի տարիներին էլ Ադրբեջանը գերակա դիրքերում էր, սակայն դա չխանգարեց, որ պարտություն կրի: Եվ որպեսզի հնարավոր նոր պատերազմի դեպքում էլ հաղթանակը հայկական կողմինը լինի, Վարդան Խաչատրյանը նկատում է, որ հայրենիքը պետք է դարձնել թանկարժեք, իսկ երկրում պետք է արդարություն տիրի:

Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության ներկայացուցիչ, նախկին փոխնախարար Վահան Շիրխանյանը մադրիդյան սկզբունքների մասին խոսելիս ավելի արմատական դիրքորոշում է ցուցաբերում: Նա համոզված է, որ սկզբունքների հիմքում Արեւմուտքի եւ Թուրքիայի շահերն են: Նրա կարծիքով, սկզբունքները հակահայկական են, անգամ մեկ դրույթի կիրառումը հավասարազոր է Ղարաբաղն Ադրբեջանին հանձնելուն: Սկզբունքների մեղավոր նա համարում է Հայաստանի նախկին իշխանությանը: «Ռոբերտ Քոչարյանը եւ Վարդան Օսկանյանը պետք է պատասխան տան դրանց համար ԼՂՀ դատարանում» հայտարարեց Վահան Շիրխանյանը: Նրա կարծիքով, այսօր յուրաքանչյուր հայ անելիք ունի, «համախմբվածության ժամանակն է»:

Վահան Շիրխանյանը հիշեցրեց, որ Արցախյան պատերազմի վերջին օրերին հայկական ուժերը ռուսական սահմանից երկու օրվա հեռավորության վրա էին, սակայն ինքնակամ կանգ առան: «Մեր պատասխանը մեկն է, նոր պատերազմի դեպքում մենք կհասնենք մինչեւ սահմանը», ասաց Վահան Շիրխանյանը:

ԱՐԵՎԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ

Մանկավարժներին խրախուսելու նպատակով

ԼՂՀ կառավարությունը հատկապես գյուղական բնակավայրերի դպրոցներն անհրաժեշտ մասնագետներով համալրելու նպատակով հանդես է եկել մանկավարժներին խրախուսելու նոր նախաձեռնությամբ: Գործադիրի ընդունած նոր որոշմամբ սահմանվել է ուսուցիչներին այլ վայր աշխատանքի ուղեգրելու կարգը, որի համաձայն՝ պետական միջոցների հաշվին նրանց կտրվի աշխատավարձի 50 տոկոսի չափով հավելավճար եւ բնակելի տարածության համար՝ մինչեւ 20 հազար դրամի չափով ամենամսյա ֆինանսական աջակցություն:

Ինչպես տեղեկացնում են կառավարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապի վարչությունից, հանրապետության հեռավոր բնակավայրերի կրթօջախներում առավելապես օտար լեզվի մասնագետների կարիք կա, իսկ վեց տասնյակից ավելի դպրոցներ չունեն համապատասխան կադրեր: Այս տվյալները կառավարության նիստում ներկայացրել է կրթության եւ գիտության նախարար Վլադիկ Խաչատրյանը:

Վարչապետ Արա Հարությունյանը նիստում կարեւորել է ուսուցիչներին այսկերպ խրախուսելու անհրաժեշտությունը, շեշտելով, որ հայրենասիրական ձեռնարկին արձագանքող ուսուցիչների համար պետք է բարենպաստ պայմաններ ստեղծել:

Ելնելով հայաստանյան փորձից՝ առաջարկվել է անհրաժեշտության դեպքում ծրագրում ընդգրկել նաեւ համապատասխան կրթություն ունեցող զինծառայողների: Դրա նպատակահարմարությունն այն է, որ ինչպես ցույց է տվել պրակտիկան, զինծառայությունն ավարտելուց հետո նրանց մի մասը շարունակում է աշխատել՝ բնակություն հաստատելով այդ գյուղում:

Նույն աղբյուրի համաձայն, կառավարությունը նաեւ հաստատել է Հայաստանի պետական ագրարային համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղի 2009 թվականի մագիստրատուրայի ընդունելության մասնագիտությունների ցանկը, ըստ որի՝ ագրոնոմիա, անասնաբուժություն, խմորման արտադրության տեխնոլոգիա եւ գինեգործություն ու ագրարային արտադրության էկոնոմիկա եւ կառավարում մասնագիտությունների գծով հատկացվում է անվճար ուսուցման 9 եւ վճարովի ուսուցման 5 տեղ:

Կ. ՉԱԲԲԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

«Արդշինինվեստբանկը» ամենախոշոր հարկատու բանկն է

Ընթացիկ տարվա առաջին կիսամյակի տվյալներով՝ «Արդշինինվեստբանկը» Հայաստանի բանկային համակարգի առաջատարն է վճարած հարկերի ծավալով եւ 13-րդը՝ 300 խոշոր հարկատուների շարքում: Բանկի լրատվական ծառայությունից հաղորդում են, որ 2009-ի հունվար-հունիսին «Արդշինինվեստբանկի»՝ պետական բյուջեին կատարված վճարումները կազմել են 1,6 մլրդ դրամ: Տեղեկացվում է նաեւ, որ կիսամյակի արդյունքներով բանկն առաջինն է ստացված զուտ շահույթի ծավալով՝ 1879,4 մլն դրամ, երկրորդը՝ ընդհանուր կապիտալի մեծությամբ՝ 26 983.5 մլն դրամ (տեսակարար կշիռը բանկային համակարգում՝ 10,5 տոկոս): Ընդհանուր ակտիվների եւ ընդհանուր պարտավորությունների մեծությամբ բանկը զբաղեցնում է 3-րդ տեղը:

Ա. Մ.

AZG NEW 4.QXD 7/31/2009 9:31 PM Page 1

Սուտ ու փուտ, սխալ եւ ողորմելի...

Քանի՞ցս օգտագործել եմ, ընթերցողի ներողամտությունն եմ հայցում, մի անգամ էլ օգտվեմ մարխիզմի դասականներից. «Մի ուրվական է շրջում Հայաստանում, եվրոպական չափանիշների ուրվականն է դա»:

Աջից ձախ, վերից վար, ազատ մ² չի մնացել, ոչ էլ՝ բնագավառ, կամ ասպարեզ: Մնացել են ավանդույթները, տաղավար տոներն էլ համապատասխանեցնել վերոնշյալ չափանիշներին, եւ... առա՜ջ դեպի բարգավաճո՜ւմ, բարեկեցությո՜ւն, կատարելությո՜ւն, առա՜ջ, դեպի սույն չափանիշների լիակատար հաղթանակը մեր երկրում...

Հնադարյան մշակույթի տեր, մեծանուն նախնյաց պատգամներն ուսած, իրավական, դասական, հասարակագիտական, այլեւայլ կարծրատաս հիմքերի վրա խարսխված մեր իմացությունները, սովորույթները, ավանդույթները, ապրելակերպն ու մտածելակերպը՝ այս ամենը պահ տված արխիվ, նոր-նոր (՞) անծանոթ ու անհարազատ, անհասկանալի եւ անընմբռնելի արժեքների պոչը բռնած, հաստատապես կույրերի նման խարխափելով, ինքներս մեզ հարկադրում, սիրողում ենք գնալ ծուռուխոտոր, անհասցե եւ անել, որոգայթառաս ճամփաներով, հասնելու համար չգիտենք, թե ուր...

Եվ մեկնումեկի մտքով իսկ չի անցնում գեթ մի պահ կանգ առնել, շունչը տեղը բերել, «... մի բաբաթ փիքր անել», թե որո՞նք են դրանք, որքանո՞վ են համահունչ մեր նվիրական ավանդույթ-սովորույթներին, մեր նիստուկացին, ի վերջո, մեր հոգեկերտվածքին... Չէ՛, եվրոչափանիշներ, ճիշտ ինչպես եվրոպատուհանները, եվրոնորոգումը, եվրո-զուգարանակոնքը, եվրո-ն, վերջապես՝ եվրոզահրումարը...

Ինչո՞ւ: Ինչպե՞ս: Ե՞րբ եւ ինչի՞ց ծայր առավ մոլորությունը, երբվանի՞ց նենգափոխվեց իրական արեւմտյան արժեքների կեղծ ու սխալ մեկնությունը, կասկածելի, խորթ ու անընդունելի չափանիշների ծավալեղ չափաբաժինների ներարկումը ազգային ավիշ, զարկերակ:

Ստույգ պատասխան չունեմ: Եվ՝ կարեւոր էլ չէ: Աչք ունեք, ականջ՝ նույնպես–տեսանելի է, լսելի, շոշափվող, ցցուն...

Ամենայն հավանականությամբ, անհայտ մեկը սկզբնավորել-ծայր է տվել դրան, ինքերդիայով էլ գնո՞ւմ, գնո՞ւմ ենք: Կամ՝ որեւէ դուրսպրծուկ խաղարծիչ է սկզբնավորել, ամեն գնով իր կրթվածությունն (՞) ու լայնախոհությունն (՞) ի ցույց դնելու նպատակով: Ասված իրենց հետ:

Ես անձամբ ոչինչ չունեմ վերցնելու, ընդօրինակելու, փոխառնելու նրանցից, ովքեր դեռեւս միջին դարերում ապրատակեցին, կողոպտեցին Բյուզանդիան, հետայդու կապկելով ամեն-ամեն այն բյուզանդականը՝ օրենք, պետականագիտություն, արվեստներ ու արհեստներ, պարզապես՝ ապրելակերպ ու կենցաղ: Կամ՝ նրանց նախնիներից, ովքեր ոտի տակ տվեցին նորահայտ Նոր Աշխարհը, ուղղակի բնաջնջելով մինչեւ օրս աշխարհին զարմացնող բնիկ ցեղերին (ացտեկներ եւ ինկեր), հիմք դնելով ցեղասպանությանը: Թերեւս դա՞ է պատճառը, որ մինչ օրս, պատրվակարարությամբ եւ խուսանավումներով հետաձգում են խարանն իրենց ճակատից պոկելու, մարդավայել եւ արժանապատիվ ապրելու գործողությունը: Ասված իրենց հետ՝ նույնպես...

Ամենակարեւորը՝ ի՞նչ սովորես երեկվա, երեկ չէ անցյալ օրվա թալանչիներից ու մարդասպաններից: Առանց այդ էլ, կամա թե ակամա, հսկայական աղբաբեռ ենք ուսել դրսերից... Անձամբ ես ամենեւին տրամադիր չեմ նման քայլի, նույնն էլ ձեզ եմ խորհուրդ տալիս խոնարհաբար: Եվ ամեն անգամ, երբ լեզվի ծայրին է «եվրոպական չափանիշներ» բառակապակցությունը, պապանձվեք եւ մտաբերեք սեփական ժողովրդի՝ դարեր ի վեր տալու եւ ուրիշի եւ ոչնչին աչք չդնելու նվիրական սովորույթը, հարազատ ակունքների անաղարտությունը եւ հագեցվածությունը, վստահ լինեք, կխուսափեք ախտից:

Բարեկամնե՛ր, ընկերնե՛ր, եղբայրնե՛ր, պարոնա՛յք, ախր ի՞նչ չափանիշ, երբ դեռ նախորդ դարում Եվրոպայի մայրամուտն էր քննել-պարզաբանել Ա. Շպենգլերը, երբ մեր աչքի առաջ են Ամերիկայի՝ հզորազոր տերության սնանկացումը, պարտերը մարելու անկարողությունը եւ գծագրվող հանգուցալուծման հեռանկարը:

Ընդամենը 200 տարվա (քիչ ավելի) պատմություն ունեցող Ամերիկան, իր վերելքի սկզբնական շրջանում՝ աներկբա հրապուրիչ, ուսանելի, ընդօրինակելի, շատ կարճ վազք ունեցավ, չհետեւեց մարզական տարրական կանոնին (սպրինտերը սպայտ չի կարող լինել), այսինքն՝ կարճ տարածություններ հաղթահարող վազողը երկար տարածություններ վազելիս ընդամենը շնչասպառ է լինում: Գլխավորը, պատմության դասերն արհամարհեց, նաեւ՝ այբբենական օրենքը, որ դեռեւս չի եղել եւ չի կարող լինել կործանման չենթակա որեւիցե կայսրություն, համաշխարհային տիրապետության ձգտող, բոլորին ապրելու եւ գործելու դասեր տվող որեւիցե քաղաքական-պետական համակարգ, որը կհարատեւի... Ահա եւ, նրանք մոտեցել են եւ արդեն տեւական ժամանակ բախում են Անհայտության դուռը...

Եվ կարծում եմ, չեմ սխալվում, որ «եվրոպական չափանիշներ» ասելով, մենք նկատի ենք ունենում ոչ միայն աշխարհամասային, ոչ այնքան հեռու եվրոպականը, այլեւ հեռուհեռավոր ամերիկյանը նույնպես: Այնպես որ, մտադրված հայրենակիցներիս հետ պահել մոլորություններից, այդ հեռուներից բխող-եկող վտանգներն էլ ներառա շարադրանք:

Նաեւ՝ «եվրոպական չափանիշների» այս համաձարակը շատ է նման մեկ ուրիշ փորձանքի: Դժվար է հիշել, թե առաջին անգամ ո՞ր տահակն է օգտագործել «ի շնորհիվ» ածանցիանին այլանդակությունը, որը շատ շուտով ամենալայն տարածումը գտավ, հատկապես հեռուստատեսային եթերում, ուր պատգամավորներ, աստիճանավորներ, նախարարներ, գիտնականներ (՞) եւ միայն ընդօրինակելու սովոր մարդիկ «ի շնորհիվ»-վեցին, վստահ, որ սույն անիմաստությամբ «ճոխ են խոսում»: Ճոխ չէ դա, բարեկամներ, այլ տարրական անգրագիտություն, լավագույն դեպքում՝ կիսագրագիտություն, ինչ ավելի, շատ ավելի վատ է պարզ ու հասարակ անգրագիտությունից:

Այսքա՛նը: Եվ հավատացեք ինձ, բարի մարդիկ, ես ձեր լավն եմ ուզում...

ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
30 հուլիսի, 2009 թ.

Կիլիկիայի հայկական մանրանկարչության բացառիկ ցուցահանդես Մատենադարանում

- Հետաքրքրական է իմանալ, թե ինչպե՞ս է սկզբնավորվել Կիլիկիայի հայկական մանրանկարչությունը, ի՞նչ ազդեցություններ է կրել եւ ինչպե՞ս է հասել այդօրինակ ինքնատիպության:

- Կիլիկիայի հայկական մանրանկարչությունը բացառիկ երեւույթ է, նրա առաջացումը, հասկանալի է, կապված է Կիլիկիայի հայկական իշխանության, հետո նաեւ թագավորության առաջացման հետ, որ գտնվում էր Արեւելքի եւ Արեւմուտքի խաչմերուկում: Կիլիկիայի հայկական մանրանկարչությունը ձեւավորվեց հիմքում ունենալով հայկական մանրանկարչության ազգային ավանդները եւ շփումներ ունենալով բյուզանդական արվեստի հետ, որը ժամանակին համարվել է ամենաբարձր կատարելության հասած մանրանկարչական դպրոցը: Միեւնույն ժամանակ, Կիլիկիայի դիրքն այնպիսին էր, որ անխուսափելի էին նաեւ մահմեդական հարեւանների հետ շփումները: Այդ շրջանում, ինչպես հայտնի է, սկսվեցին նաեւ խաչակրաց արշավանքները, եւ խաչակիրների միջոցով այնտեղ ներթափանցեցին արեւմտյան արվեստի ավանդույթները: Կիլիկիայի մանրանկարչության յուրահատուկ ոճը ձեւավորվեց այդ բոլոր ակունքներից սնվելով, իհարկե՝ հիմքում ունենալով հայկական մանրանկարչության ավանդները, բայց պատկերագրական տարրեր վերցնելով նաեւ նշված երկրներից եւ ժողովուրդներից:

- Հատկապես ի՞նչ տարրեր են ընդօրինակված այդ մշակույթներից:

- Բյուզանդական արվեստից հայ վարպետները վերցրել են պատկերների մշակվածությունը, մարմինների, դեմքերի, հագուստների հստակ պատկերումը, իսկ արեւելյան արվեստից՝ զարդանկարչությունը: Բյուզանդական մանրանկարչությունն այդքան հարուստ զարդանկարչություն չունի, իսկ կիլիկյանը, փաստորեն, կարողացավ համատեղել ե՛ւ բյուզանդական, ե՛ւ արեւելյան ճոխ զարդապատկերները, ինչպես նաեւ պատկերագրական որոշ հորինվածքներ վերցնել խաչակիրների միջոցով ներթափանցած արեւմտյան պատկերագրությունից: Այս բոլորի միջոցով

Մաշտոցի անվան Մատենադարանում բացվել է Կիլիկիայի հայկական մանրանկարչությանը նվիրված բացառիկ ցուցահանդես, որտեղ ներկայացված են Մատենադարանում պահվող լավագույն 40 գործերը, այդ թվում՝ «Հեթում արքայի ճաշոցը», «Ութ նկարիչների Ավետարանը», ինչպես նաեւ Թորոս Ռոսլինի ձեռագրերից երկուսը, որոնցից մեկն ամբողջապես նրա գրչին է պատկանում, իսկ մյուսի միայն մյուսի 30 թերթը, քանի որ այդ ձեռագիրը ժամանակին ընկել է օտարների ձեռքը եւ բարբարոսաբար դաշունահարվել: Բարեբախտաբար, հետագայում հաջողվել է վերականգնել ձեռագրի վնասված թերթերը:

Կիլիկյան մանրանկարչության առանձնահատկությունների մասին զրուցեցինք Մատենադարանի արվեստի պատմության եւ գրչության կենտրոնների ուսումնասիրության բաժնի վարիչ Կարեն Մաթեւոսյանի հետ:

Հեթում 2-րդ արքայի Ճաշոցը

առաջացավ ինքնուրույն ոճ: Սակայն կիլիկյան մանրանկարչության ճոխությունը պայմանավորված է այն բանով, որ այստեղ տեսնում ենք բազմաթիվ ձեռագրեր՝ ստեղծված թագավորների, թագուհիների, ազնվականների, ինչպես նաեւ հայոց կաթողիկոսների եւ բարձրաստիճան հոգեւորականների պատվերով: Որքան մեծ էին պատվիրատուի նյութական հնարավորությունները, այնքան ավելի շքեղ էին նրա պատվիրած ձեռագրերը, եւ այդ պատվիրատուների ճաշակն ու հնարավորությունները համընկան այն տաղանդավոր նկարիչների աստղաբույլի երեւան գալու հետ, որի միջոցով առաջացավ Կիլիկիայի հայկական մանրանկարչությունը:

- Կիլիկյան մանրանկարչության մասին խոսելիս հիմնականում նշվում են անվանի երկու վարպետների՝ Թորոս Ռոսլինի եւ Սարգիս Պիծակի անունները, ի՞նչ կասեիք մյուս նկարիչների մասին:

- Նախ ասեմ, որ Կիլիկիայում բազմաթիվ հայկական վանքեր կային, նշանավոր էր հատկապես Սկեւռայի վանքը, Հռոմկլա կաթողիկոսանիստ նստավայրը՝ գրչության կենտրոնով, Սիսը, մեծ ու փոքր այլ վանքեր, որտեղ աշխատում էին նշանավոր գրիչներ, մանրանկարիչներ: Նրանց մեջ հայտնի անուններ են, իհարկե, Թորոս Ռոսլինը, Սարգիս Պիծակը, իսկ մյուս նկարիչներից կարելի է հիշատակել Կոստանդին, Ստեփանոս, Վարդան անուններով նկարիչներին: Սարգիս Պիծակի հայրը նույնպես մանրանկարիչ էր՝ Գրիգոր Պիծակ անունով:

- Կա՞ն ձեռագրեր, որոնց մանրանկարիչների անունները հայտնի չեն:

- Իհարկե, Մատենադարանում ունենք մի շարք ձեռագրեր, որոնց ծաղկողների անունները չեն պահպանվել: Դրանցից մեկը 1286 թվականին գրված «Հեթում II արքայի ճաշոցն» է, որը համարվում է գրչային գեղանկարչության գլուխգործոց: Մյուս ձեռագիրը կոչվում է «Ութ նկարիչների Ավետարան», հետաքրքրական է, որ դրա վրա աշխատել են ոչ թե 8, այլ 4-5 նկարիչ, բայց ձեռագիրն անավարտ է մնացել, եւ 1320-ին ավետարանիչների պատկերներ ավելացնելով, ձեռագիրն ամբողջացրել է Սարգիս Պիծակը: Այդ ձեռագրի առանձնահատկությունն այն է, որ առանձին թերթերի վրա ոչ թե տերունական պատկերներ են, այլ Ավետարանի թեմատիկ պատկերներ՝ արված տողերի արանքում: Դա նույնպես համարվում է բացառիկ արժեքավոր եւ բարձրարվեստ ձեռագիր:

- Որո՞նք են կիլիկյան մանրանկարչության բնորոշ գծերը, ինչո՞վ է այն տարբերվում հայկական մանրանկարչության մյուս դպրոցներից:

- Կիլիկյան ոճին հիմնականում հատուկ են ձեւերի նրբությունը, կատարման բարձր վարպետությունը, ոսկու առատ կիրառությունը, մի բան, որ ուրիշ տեղերում այդչափ նկատելի չէ: Կիլիկիայի մանրանկարչության ավանդները հետագայում վերադարձան Հայաստան: Հետաքրքրական է, որ երբ 14-րդ դարի սկզբներին Սյունիքում ծաղկեց Գլաձորի համալսարանը, բազմաթիվ կիլիկեցիներ եկան այնտեղ ուսանելու: Նրանք իրենց հետ բերեցին նկարազարդ Ավետարաններ, եւ կիլիկյան մանրանկարչության ավանդները Հայաստանում յուրօրինակ զարգացում ունեցան Գլաձորի դպրոցում: Կիլիկյան դպրոցի ազդեցությունը զգացվում է Թորոս Տարոնացու, Ավագի եւ ուրիշ նկարիչների արվեստում:

- Մանրանկարչությունը գրքարվեստի բաղկացուցիչ մասն է, ինչպե՞ս կբնութագրեք կիլիկյան գրքարվեստը:

- Կիլիկյան գրքարվեստն, իրոք չափազանց արժեքավոր է, որովհետեւ յուրահատուկ է ոչ միայն մանրանկարչությունը, այլեւ գիրն ու գրչությունը, կազմարարական արվեստը: Հայտնի է Սկեւռայի մասնատուփը, որն իսկական ոսկերչական արվեստի գործ է: Կարելի է ասել, որ այդ շրջանը մեր գրքարվեստի մեծ վերելքի շրջանն էր, որ տեւեց 13-րդ դարի սկզբից մինչեւ 14-րդ դարի սկիզբը: Այն կարելի է համարել հայ մանրանկարչության ոսկե դարը, որի մեջ, իհարկե, առաջնային տեղ ունի Կիլիկիան: Իհարկե, այդ ժամանակ Հայաստանում նույնպես ձեռագրեր էին գրվում, բայց, ցավոք, դրանցից շատ քիչ են մեզ հասել: Արքունական ձեռագրերի մասին կարելի է ասել, որ Կարսի Գագիկ Աբասյան թագավորի մի ձեռագիր է պահպանվել, որի մեջ թագավորական ընտանիքի պատկերը կիսատ է, իսկ Կիլիկիայից ունենք մի շարք ձեռագրեր, մասնավորապես Լեւոն III թագավորի եւ Կեռան թագուհու պատվիրած ձեռագրերը, որոնք այժմ գտնվում են Երուսաղեմի Սրբոց Հակոբեանց վանքում: Այդ ձեռագրերում պատկերված են արքունական ընտանիքի անդամները, եւ այդ նկարները նույնպես բացառիկ են: Երուսաղեմում բավականին արժեքավոր կիլիկյան ձեռագրեր կան, իհարկե, Մատենադարանի հավաքածուն եւս շատ հարուստ է, եւ այս ցուցադրությամբ, փաստորեն, ներկայացվել են Կիլիկիայի մանրանկարչության առանցքային գործերը: Դրանց թվում են նաեւ Գրիգոր Նարեկացու «Մայրաց ողբերգության» երկի ամենահին ընդօրինակությունը, որում պատկերված են Նարեկացու չորս դիմանկարները:

- Ցուցադրված ձեռագրերից երկուսը գրվել են Կիրորոսում: Ի՞նչ կասեք այդ ձեռագրերի մասին:

- Այո, ձեռագրերից երկուսը գրվել են Կիրորոսում, քանի որ Կիլիկիայի թագավորության ծաղր շրջանում բավականին թվով հայ գրիչներ, մանրանկարիչներ, հոգեւորականներ, արվեստագետներ անցան Կիրորոս եւ այնտեղ շարունակեցին ձեռագրեր գրել ու նկարազարդել: Այդ երկու ձեռագրերից մեկը պատկանում է 13-րդ դարավերջին, մյուսը՝ 14-րդ դարասկզբին: Պետք է ասել, որ բավականին մեծ թվով հայ նկարիչներ եւ գրիչներ Կիլիկիայից անցել են նաեւ Իտալիա, որտեղ այժմ տասից ավելի քաղաքներում ունենք 14-րդ դարի հայերեն ձեռագրեր: Կիլիկեցի վարպետները մեկնել են տարբեր վայրեր, այդ թվում՝ Ղրիմ, եւ ամենուրեք տարածել կիլիկյան արվեստի ավանդները:

Հարցազրույցը վարեց
ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԸ

AZG NEW 5.QXD 7/31/2009 9:31 PM Page 1

Հայ-ղոտիական առնչությունների եզակի ուսումնասիրություն

«Յուհաննա էլ Արմանին եւ նրա ղոտիական արբապատկերները»

Եգիպտոսի պատմության տարբեր ժամանակաշրջաններում հայերը մեծ դերակատարություն են ունեցել երկրի քաղաքական, տնտեսական եւ մշակութային բնագավառներում: Եգիպտահայերը մասնակցել են Նապոլեոնի 1798-ի եգիպտական արշավանքին ցույց տված դիմադրությանը: XIX դարի առաջին կեսին եգիպտահայ գաղութը նոր վերելք է ապրել շնորհիվ Մոհամմեդ Ալիի կիրառած վարչական ու տնտեսական բարեփոխումների, որոնց շնորհիվ էապես փոխվել է քրիստոնյաների սոցիալ-իրավական դրությունը: Արտաքին գործերի եւ առեւտրի դիվանի հաջորդական 3 նազիրները եղել են հայեր՝ Պողոս Յուսուֆյանը (մինչեւ 1844 թ.), Արթին Ջրաքյանը (1844-50 թթ.) եւ Առաքել Նուբարյանը (1850-53 թթ.): Պետական ղեկավար պաշտոններում աչքի են ընկել Նուբար փաշան (1824-99 թթ.), Պողոս Նուբար փաշան (1851-1930 թթ.) եւ ուրիշներ:

Ղոտիները քրիստոնյա եգիպտացիներ են, հին եգիպտացիների հետնորդները: Բնակվում են Եգիպտոսի Արաբական Հանրապետությունում, հիմնականում՝ Ասիութում, Կահիրեում: Ոչ մեծ համայնքներ կան նաեւ Սուդանում, Իսրայելում, Հորդանանում, Իրաքում, Քուվեյթում: Նրանք հիմնականում ծառայողներ են, առեւտրականներ, արհեստավորներ: VII դարում արաբների Եգիպտոս ներխուժման եւ հետագայում ղոտիների նկատմամբ ազգային, կրոնական եւ տնտեսական ճնշումների հետեւանքով ղոտիների թիվը նվազել է կազմելով բնակչության փոքրամասնությունը՝ հոգեւոր համայնքի ձեւով: Հինգերորդ դարում ձեւավորված ղոտիական եկեղեցու հոգեւոր առաջնորդն է պատրիարքը (նստավայրը՝ Կահիրե): Անկում է ապրել նրանց մշակույթը:

Սակայն IV-XVIII դարերում այդ մշակույթը, մասնավորապես գրականությունը, զգալի առաջընթաց է արձանագրել եւ հիմնականում զարգացել է վանքերում: Ղոտիական առաջին գրավոր հուշարձաններից են եղել Հին ու Նոր Կտակարանների, քրիստոնեական աստվածաբանների երկերի եւ այլ գործերի թարգմանությունները հունարենից: Ամենամեծ գրողն է համարվում պատմական գործիչ Շենուդեն (մահացել է 451 թվին):

Հայ-ղոտիական հարաբերությունները ունեցել են մշակութային, կրոնական բնույթ: Նրանք սկզբնավորվել են վաղ միջնադարում: Ղոտի մատենագիրները ծանոթ են եղել հայ մատենագրությանը, մասնավորապես Ագաթանգեղոսի «Պատմություն Հայոց»-ին, որից պահպանված արաբերեն խմբագրված համառոտ օրինակը թարգմանվել է ղոտիերենից:

Ղոտիների եկեղեցիներում պահպանվել են բազմաթիվ սրբապատկերներ, որոնց զգալի մասի հեղինակներն են Հովհաննես Հայը (Յուհաննա էլ Արմանին) եւ նրա համագործակիցները՝ որդին՝ Հովսեփը (Գիրգիսը), Իբրահիմ էլ Նասխիը, Հաջի Դեֆին Մերգերիոսը:

Մինչեւ 17-րդ դար ղոտիական եկեղեցիների վերանորոգումներ նախաձեռնողները դիմակայել են կրոնական եւ քաղաքական դժվարություններին իշխանությունների կողմից: Սակայն դրանից հետո դրությունը սկսել է փոխվել եւ դարձել այնքան դինամիկ, որ գրեթե բոլոր եկեղեցիները ինչ-որ չափով եւ ձեւով վերանորոգվել են: Սա բացատրվում է ոչ թե համայնքի անդամների հարստացմամբ (քանի որ ղոտիական համայնքը միշտ էլ հարուստ է եղել), այլ այդ ժամանակներում տիրող հանդուրժողական մթնոլորտով:

Ղոտիական արվեստի բազմաթիվ նմուշներ պահպանվում են Եգիպտոսի ղոտիական եկեղեցիներում եւ ղոտիական արվեստի թանգարանում: Ղոտի արվեստաբաններին քաջածանոթ են եղել Յուհաննայի անունը եւ գործը: Մեծ թվով գրականություն կա նրա արվեստի գործերի վերաբերյալ: Գրախոսվող ներկա հատորը՝ **«Օսմանյան Եգիպտոսում գործող հայ արվեստագետը: Յուհաննա էլ Արմանին եւ նրա ղոտիական արբապատկերները»** խորագրի ներքո տարբեր անկյուններից է ներկայացնում արվեստագետին: Ինչպե՞ս էր նա ինտեգրված 18-րդ դարի պատմական այդ միջավայրին, ի՞նչ սոցիալական ակունքներ ուներ նրա արվեստը, ի՞նչ պայմաններում է աշխատել նա, ովքե՞ր են պատվիրել նրան այդ սրբապատկերները եւ ինչպե՞ս է նա կարողացել բավարարել սրբանկարներ նկարելու աճող պահանջարկը:

Այս եւ մի շարք այլ հարցերի պատասխանները գտնելու համար գրքի հեղինակ **Մագդի Գիրգիսը** խորամուխ է եղել Կահիրեի օսմանյան դասական այյանների բազմաթիվ գրառումների մեջ ու կատարել լուրջ եւ մանրազնին գիտական ուսումնասիրություն:

Մագդի Գիրգիսը անկախ գիտնական-բանասեր է, մասնագետ՝ օսմանյան շրջանի եգիպտական փաստավավերագրական աղբյուրների: Գիտությունների դոկտորի կոչում է վաստակել Կահիրեի համալսարանում: Համահեղինակ է Կահիրեի ամերիկյան համալսարանի հրատարակչական տպագրության ընթացքում գտնվող «Եգիպտոսի պատերը» ընդարձակ մատենաշարի երրորդ հատորի, որը կրում է «Արդի ղոտիական պատության առաջացումը» վերնագիրը:

Գիրքը լույս է ընծայել Կահիրեի ամերիկյան համալսարանի հրատարակչատունը 2008-ին, **«Հայ մշակույթի բարեկամներ»** մարմնի մտահղացմամբ եւ նախաձեռնությամբ: Գրքի շնորհանդեսը տեղի է ունեցել անցյալ տարվա օգոստոսին Կահիրեում Հայաստանի դեսպանատանը՝ երկրի պետական գործիչների, նախարարությունների աշխատակիցների, օտարերկրյա դեսպանների, լրագրողների եւ հայ համայնքի ներկայացուցիչների ներկայությամբ (տես **«Ազգի»** 2008-ի սեպտեմբերի 3-ի լրատվությունը):



Գրքի նախաբանը գրել է Նելլի Հաննան, որը Կահիրեի ամերիկյան համալսարանի «Արաբական եւ իսլամական քաղաքակրթություն» բաժնի դասախոս է: Հեղինակել եւ խմբագրել է մի շարք գրքեր Եգիպտոսի վաղ շրջանի պատմության վերաբերյալ, որոնց թվում արժե հիշատակել «Ներբող գրքերին: Կահիրեի միջին խավի մշակութային պատմությունը. 16-18-րդ դդ.» հատորը (Ամ. համալ. հրատ., 2004 թ.) եւ Ռաուֆ Աբբասի համահեղինակությամբ լույս տեսած «Հասարակությունը եւ տնտեսությունը Եգիպտոսում եւ Արեւելյան Միջերկրականում, 1690-1900 թթ.» ուսումնասիրությունը (դարձյալ Ամերիկյան համալ. հրատ., 2005 թ.):

131 էջ պարունակող գիրքը բաղկացած է 6 գլուխներից (պատմական հետահայաց ակնարկ, սրբանկարչությունը 18-րդ դարի Եգիպտոսում, եգիպտական սրբանկարները նախքան Յուհաննա էլ Արմանին, հայկական համայնքը Եգիպտոսում, կենսագրական ուրվագծեր Յուհաննա էլ Արմանիի եւ Յուհաննա էլ Արմանիի հայտնի գործերը), եզրակացություններից, երեք հավելվածներից, գրքի 60-61 էջերի արանքում տեղադրված 16 էջանկարների նկարագրություններից, բացատրական մատրամասնություններից եւ անվանացանկից: Լուսանկարները կատարել է **Նաբիլ Մանկաբադին**:

Հեղինակը խոստովանում է, որ բավական դժվար է եղել հատուկ մատրամասնություններ ձեռք բերել Յուհաննայի կենսագրության վերաբերյալ, քանի որ վերջինս իր սրբապատկերներից բացի ուրիշ ոչինչ չի թողել իրենից հետո, ոչ մի փաստաթուղթ իր կամ ընտանիքի մասին: Միայն Շարիայի դատարանական փաստաթղթերի (պայմանագրեր, գործարքներ, կտակի վավերացումներ եւ այլն) հիման վրա կարողացել է Մագդի Գիրգիսը տեղադրել Յուհաննային երկրի պատմական եւ հասարակական կոնտեքստում, հասկանալ նրա ոճի եւ արվեստի գեղագիտական բնույթն ու ինքնատիպությունը:

Յուհաննան սովորական մի անձնավորություն է եղել, որը կարողացել է իր արվեստը հասցնել որոշակի մակարդակի: Նա հարստություն դիզելու հետեւից չի ընկել, բայց համեմատաբար հանգիստ, բարվոք կյանք է վարել:

Նրա ընտանիքը Եգիպտոս է տեղափոխվել 17-րդ դարի վերջերին կամ 18-րդ դարի սկզբներին: Ըստ երեւույթին առաջին հաստատվողը եղել է Յուհաննայի հայրը՝ Արթին Կարապետը, որը Եգիպտոս է եկել իր երկու որդիներ՝ Յուհաննայի եւ Սալիբի (Խաչատուր) հետ:

Յուհաննայի առաջին կինը եղել է Ֆարիսինիյան՝ Թադրոս Միխայիլ էլ Նուարանի էլ Յակուբի (յակոբինյան քրիստոնյա) էլ Թուխի էլ Խայյաթի (դերձակ) դուստրը, ղոտի հոր եւ հայ մոր աղջիկը: Ունեցել է չորս զավակ, երեք որդի՝ Արթին, Գիրգիս, Յակուբ եւ մեկ դուստր՝ Մինքաբա: Ֆարիսինիյան մահացել է 1770-ի օգոստոսի 9-ին, երբ զավակները բոլորն էլ չափահաս են եղել: Հեղինակը ենթադրում է, որ եթե ամենափոքրը 18 տարեկան է եղել այդ ժամանակ, ուրեմն ծնողների ամուսնությունը պետք է տեղի ունեցած լիներ առնվազն 25 տարի առաջ, այսինքն՝ 1745-ին:

Յուհաննան երկրորդ անգամ է ամուսնացել ղոտի մի կնոջ՝ Դիմյանայի հետ, դուստրը՝ էլ Դիմիմի (ոչ մահմեդական) Գիրգիս Անբար էլ Սայիդ (ոսկերիչ) էլ Նուարանի էլ Կիբտիի (ղոտի քրիստոնյա), որից երեխաներ չի ունեցել:

Յուհաննայի ամենամեծ զավակը՝ Արթինը ոսկերիչ է եղել Դար էլ Դարբխանայում (դրամահատարանի մոտ): Ամուսնացել է հայի՝ Մաղլինայի (Մաղլեն) հետ, դուստրը՝ էլ Դիմիմի Ջարգուզ էլ Այնթաբլի էլ Նուարանի էլ Արմանիի (այնթաբցի հայ քրիստոնյա), որից ունեցել է 3 դուստր՝ Ուարդա (Վարդուհի), Լաթիֆա եւ Մարիամ անուններով: 1775-ին նրանք դեռեւս դեռահասներ են եղել:

Ըստ արխիվներում պահպանված փաստաթղթերի՝ Արթինը հարուստ եւ կարեւոր անձնավորություն է եղել հայկական համայնքում: Ապրել է Խաթ էլ Շայխ էլ Ռամլի թաղամասում, որը գտնվում է Քանթարաս էլ Ռամլիի եւ Մայդան էլ Ղալլայի մեջտեղում: Իր բնակեցրած տան կեսը եղել է իր սեփականությունը, իսկ մյուս կեսը նա վարձել է մի հայկական կրոնական հաստատությունից, որն իր կալվածքները հետագայում նվիրաբերել է Երուսաղեմի Մար Յակուբ (Սուրբ Հակոբ) վանքին:

Արթինը վերակառուցել է ամբողջ շենքը, ընդարձակել եւ ավելացրել վարձի գինը հոգուտ կալվածատիրոջ: Շենքը մոտիկ է եղել իր հոր բնակարանին, երկուսն էլ գտնվել են Մուսքիյում (Կահիրեի աշխույժ թաղամասերից)՝ Հարաթէլ Շայլ էլ Ռամլի փողոցին մոտիկ:

Երկրորդ որդին՝ Գիրգիսը (Հովսեփ) աշխատել է որպես նաֆֆաշ (զարդանախշող-ներկարար): Քիչ բան է հայտնի նրա մասին:

Երրորդ որդին՝ Յակուբը ըստ երեւույթին վաղ է մահացել (բայց մոր մահվանից հետո): Իր, ինչպես նաեւ քրոջ՝ Մինքաբայի մասին տեղեկություններ չկան:

Մյուս ճյուղը Յուհաննայի եղբոր՝ Սալիբի (Խաչատուր) ընտանիքն է: Սալիբը ունեցել է երկու զավակ՝ Գիրգիս եւ Սիմա: Ինքը՝ Սալիբը հավանաբար վաղ է մահացել (ենթադրվում է, որ նախքան 1750 թիվը):

Վերոնշյալ տվյալներից հեղինակը եզրակացնում է, որ 1740-45 թվերին ամուսնացած լինելու համար Յուհաննան պետք է, որ ավելի վաղ հաստատված լիներ Եգիպտոսում, որպեսզի պետք եղած դիրքի հասներ նախքան ամուսնանալը: Հավանական է ուրեմն, որ հայրը՝ Արթին Կարապետը Երուսաղեմից Կահիրե ժամանել էր իր ընտանիքի հետ 17-րդ դարի վերջերին կամ 18-րդ դարի սկզբներին:

Յուհաննայի ընտանիքը միջհամայնքային ամուսնությունների միջոցով միավորվելու օրինակ կարող է ծառայել: Դատարանական գործառույթների վավերագրերում հաճախ են հիշատակվում, ըստ հեղինակի, ոսկերիչ Մուալլիմ Ազար իբն Բուլուսի (որն ամուսնացել է Յուհաննայի քեռու՝ Թուհֆայի հետ) եւ Մուալլիմ Աշիկ Սիլան իբն Գիրգիսի անունները:

Յուհաննան իր կարիերան սկսել է որպես «նաֆֆաշ» (զարդանաշխող-ներկարար): Այնուհետեւ եղել է «ռասսամ» (գծագիր) եւ վերջում արհեստավարժ «մուսաուվիր»՝ սրբանկարիչ-մանրանկարիչ, որոնց թիվն այնքան էլ մեծ չի եղել այդ ժամանակ Եգիպտոսում:

Յուհաննայի ստեղծագործությունները հեղինակը բաժանել է 2 խմբի. եկեղեցիների եւ վանքերի եւ անհատ պատվիրատուների համար կատարված աշխատանքներ: Ըստ նրա հաշվարկների, տասից ավելի եկեղեցիներում եւ վանքերում (օրինակ՝ Ալ Մուալ Լակա (կախովի), Կասրիյաթ ալ Ռիհան, Աբու Սայֆասն եկեղեցիներում) Յուհաննայի ինքնուրույն աշխատանքների թիվը տատանվում է 120-290-ի, իսկ Իբրահիմ էլ Նասխիի համագործակցությամբ՝ 33-40-ի միջեւ: Իր ստեղծագործություններում, հետեւելով ավանդական ոճի կանոններին, Յուհաննան այդուհանդերձ կարողացել է նորամուծություններ մտցնել այդ արվեստում: Նա նաեւ մասնակցել է եկեղեցիների վերանորոգման աշխատանքներին:

«Յուհաննան ընդառաջ գնաց ղոտիական արվեստի եւ ընդհանրապես հասարակության զարթոնքի ժամանակաշրջանին եւ հարատեւեց այն: Նրա եւ Իբրահիմ էլ Նասխիի նման արվեստագետները մեծապես նպաստեցին ղոտիական մշակույթի վերածնունդին: Նրանք ստեղծեցին նոր ուղիներ եւ կարողացան բավարարել իրենց պատվիրատուների աճող պահանջները», եզրակացնում է գրքի հեղինակ Մագդի Գիրգիսը, որի օգտագործած գրականության ցանկում հաճույքով հանդիպեցինք մինչեւ 1997 թիվն իր վախճանվելը, երկար ժամանակ Մայր աթոռ Ս. Էջմիածնում զանազան պաշտոններ վարած (ճեմարանի վերատեսուչի քարտուղար, գրադարանի վարիչ, դիվանատան թարգմանիչ-քարտուղար եւ ձեռագրատան վարիչ), բազմաբնույթ գիտելիքներով օժտված պատմաբան՝ Նուբար Տեր-Միքայելյանի անվանը: Բազմաթիվ աշխատությունների թվում Տեր-Միքայելյանը հեղինակել է նաեւ «Էլ Մուսաուվիր Յուհաննա էլ Քուդոյի Ֆի Միսր» եւ «Եգիպտահայ գաղութը 10-15-րդ դարերում» ուսումնասիրությունները:

Մագդի Գիրգիսի սույն հատորը կարեւոր է այն առումով, որ լույս է սփռում ընդհանրապես 18-րդ դարի Եգիպտոսի ամենատարբեր ոլորտների եւ մասնավորապես հայ-եգիպտական, հայ-ղոտիական հարաբերությունների վրա, վեր հանելով սրբանկարչության ասպարեզում հայազգի Յուհաննա էլ Արմանիի ներդրումը:

ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆ

AZG NEW 6.QXD 7/31/2009 9:28 PM Page 1

Դեպի նախասկիզբ, դեպի աղբյուրը Լույսի...

Լիլիթ Նիկողոսյանի «Մեսամորֆոզներ»-ում

- Այս խեցգետինը ոչ միայն զարդ է, այլեւ որպես թալիսման կարող է ծառայել: Խեցգետնի նշանը սիրտն է, որը հաջողություն է բերում, մոլորակը լուսինն է, իսկ 5-ը ամենահաջողակ թվերից մեկն է-ահա դրանք: Զարդը կրողը պետք է զգա, որ այն ծառայում է իրեն: Այս մասանին զարդերի իմ առաջին փորձն է. սարդ է, մի փիչ ագրեսիվ է իհարկե, որոշ նրբություններ, առանձնահատկություններ ունի. մեսաղի հետ աշխատանքը տարբեր է, երբ թղթի վրա ես մտածում, միանգամայն այլ է: Այս մասանին իմ զարդն է, անվանար տառերով է ձեւավորումն արված, սա համապատասխանում է իմ ներաշխարհի ձեռագրին: Այս մեկը արեւի (հավերժի) ու թիթեռի (անցողիկի) համադրություն է, ահա՝ կարիքը, հետեւում բուրգն է, իր խորհրդանիշը: Այս մեկը արեւ է, առյուծին նմանվող, հզորության, բնության ուժի արտահայտությունն է: Զարդը պիտի ներին զգացողությամբ ընտրել: Այս մասանին շատ եմ սիրում, ես իրեն զգում եմ: Ամեն ինչը կրելու կուլտուրա կա, չէ՞: Ամեն զարդ որոշակի իմաստային խորհրդանիշի կրող է: Էսքիզներն անելուց հետո գնում եմ վերնիսաժ, եթե գտա իմ որեւէ էսքիզի նման զարդ, դա չի պատրաստվում, վերամշակվում, ձեւափոխվում է, որովհետեւ հաճելի է կրել միակն ու անկրկնելին: (Լիլիթ Նիկողոսյանն այդ արծաթե զարդերի էսքիզների հեղինակն է: Ցուցասրահի մի առանձին բաժնում նրա խորհրդապատկերային զարդերի հավաքածուն է դրված: Համագործակցում է արծաթագործ Հարութ Հովհաննիսյանի հետ):

Մեր զրույցը խզում է նկարների լռությունը: Ցուցասրահը լուռ մտածում է: Դժվար է կռահել, մեր ձայները խանգարո՞ւմ, թե՞ օգնում են ապակե ցուցափեղկերի հետեւում դրված պատկերներին, որ հանգիստ տարածք են ստեղծել՝ զգալու, վերագտնելու ասես կորցրած մի բան: Անանուն այս գծապատկերները խորհրդանիշների լեզվով են զրուցում հետդ, ակնարկների ժեստով: Պատկերից պատկեր պատմությունների մի շարք, խորհրդավոր մի շարժ հուշում են քեզ, որ այս ինֆորմացիան, մտքերի արտահոսքը ազդում է ենթագիտակցությանդ վրա, ակտիվացնում երեւակայությունդ, սրում զգացողություններդ: «Մեսամորֆոզների» պատկերաշարը մտքերիդ հանդարտ ընթացք է հաղորդում, լարվածությունը՝ թուլացնում:

Նկարչուհի-դիզայներ Լիլիթ Նիկողոսյանը Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանի շրջանավարտ է, 1998-ից սկսած սա արդեն նրա 4-րդ անհատական ցուցահանդեսն է: Հինգ տասնյակից ավելի նկարներ, գրաֆիկական աշխատանքներ, որ վերջին տարիներին են ստեղծվել: *«Հիմնականում նույն այցելուներն են, ասում է նա, կարոտում են այս նկարներին ու գալիս»*:



Մարդու հոգին ճանաչելու, նրան հասկանալու շնորհը նկարչուհուն տրված է ի ծնե: Իր այս գծապատկերներով փորձում է մարդուն, նրա հոգեկան վիճակը բացատրել-զգալ-վերապրել: Յուրահատուկ թեսթ է անցկացնում նույնիսկ՝ ընտրում ես որեւէ նկար ու նա դրա միջոցով կարդում է ներին, հոգեկան եւ մտային վիճակներդ:

Պետք չէ զարմանալ, թե նա ինչպես է հեռվից ուշադիր ուսումնասիրում հանդիսատեսին. *«Ես հարգում եմ իմ ամեն դիտորդին, եթե հարկ է լինում խոսել իր հետ, հաճույքով եմ դա անում, եթե ոչ՝ չեմ ուզում միջամտել, անգամ անուններով նրան խանգարել: Ուզում եմ լսել: Ձեզանով ճանաչում եմ ինձ, եթե կարողանամ օգնել՝ ճանաչելու նաեւ ձեզ, ինձ լավ կզգամ»:*

Ակնարկային ժեստերը, նշանների լեզուն պատկեր են գոյացնում, որոնցից մի քանիսին պիտի հեռավորությունից մոտենաս, դրանցում գծի նրբագեղությունը պատկերը որոշակիացնում է միայն տարածության վրա: *«Ամեն ինչ դուք եք ստեղծում, այս նկարները ընդամենը հիմք են ձեր երեւակայության համար»*:

Ցուցադրությանը հետեւելուց հետո այն տպավորությունն ես ունենում, ինչպես գրքի ընթերցումից կամ ֆիլմի դիտումից. այստեղ մարդկային հոգու ընթացքն է, նրա զարգացումը, պատմությունը: Նկարչության այս լեզուն աշխարհից մի քանի ձեւեր, տարրեր է փոխառել՝ ծառ, ճյուղ, պտուղ, բույս, կենդանի, մարդկային մարմին, հայացք. հայացք ներսից ու դրսից: Մտածողության կենտրոնը կինն է. *«Կանայք մի այլ կերպ են զգում աշխարհը, ավելի ոչ թե բնազդաբար, այլ ենթագիտակցաբար, կարմայով, անցյալի հիշողությունն իրենց մոտ, թերեւս, մի փիչ պահպանվում է»*: Արեւելյան հոգեւոր ուսմունքներն ու կրոնները այս պարագայում նրա ստեղծագործության գաղափարական հենքը կամ ֆոնը չեն, սրանք սեփական ներին կենսագրությամբ արդեն փորձված որոշակի մտածողություն, մտէակներ, մտապատկերներ են, կյանքի բանաձեւեր: «Կրոնը ես փորձում եմ կարդալ, փորձում եմ վերհիշել ենթագիտակցորեն. ըստ իս, ռեինկարնացիան որոշ բան տալիս է. ես հավատում եմ: Ֆիզիկան էլ է նույնը բացատրում, այն, որ էներգիան երբեք չի կորչում, փոխակերպվում է: Սրանք մեսամորֆոզի այն նշաններն են, որ մեզ երեւում են: Մենք սիրում ենք ոչ թե որդը, այլ թիթեռը, մենք որդից պետք է կարողանանք դառնալ թիթեռ»: *«... Ամեն հայացք, ամեն մարդ օգնում է մեր ճանապարհին: Որքան լավը տանք, այդքան լավը կստանանք: Եթե ուզում ես պրել բարի աշխարհում, ապա ինքդ պիտի մասնակցես այդ աշխարհի ստեղծմանը»: «Ինչպե՞ս եք դուք մասնակցում՝ նկարչությա՞մբ», հարցնում եմ: «Հիմա դուք ժպտո՞ւմ եք, ձեզ հաճելի է այստեղ»: «Այո՛»: «Ժպիտը բարություն է, չէ՞»:*

Լիլիթը խոստովանում է կենդանական ու բուսական աշխարհի հանդեպ իր թուլությունների մասին: Եթե նա սիրում է, ուրեմն հովանավորության տակ է առնում այդ մեկին, սերը միակ ու ճշմարիտ պաշտպանությունն է նեգատիվ էներգիաներից: Ինչպես սովորեցնում են մեզ իմաստուն գրքերը եւ ինչպես կյանքն է դասեր տալիս՝ աշխարհը այնպիսին է, ինչպիսին կա. նա չի փոխվում, դու ինքդ կարող ես փոխվել վերաբերմունքներովդ, եթե ուզում ես, իհարկե, ու կփոխվի նաեւ աշխարհը:

Երբ հետեւում ես *«Ամեն մարդ ինձ համար ուսուցիչ է, նույնիսկ նորածինը ժեստերով սովորեցնում է, որովհետեւ բնական է»* նրա խոսքերին ու նայում զրուցակցիդ, ինչպես ինքն է ասում՝ աչքերից ներս, հավատում ես, որ սերը, այո, մեծ հովանավորություն է, իսկ կարեկցանքը ամենազարմանալի, ամենահազվագյուտ զգացումն է: Աշխարհը կարեկցանքի ու սիրո կարիք ունի, դա լացող ուռենին է, խեղճացած պտուղը, շոգից թուլացած շունը, հոգսից հոգնած մայրը, մոլորված գեսը, դրախտածառը... ու մենք, ամենից ավելի մենք՝ հեռացած մեր նախասկզբից, մեր բուն էությունից, մեր արմատներից: *«Ես մեծ հույսեր ունեմ, որ երբեւիցե չեմ հիասթափվի մինչեւ վերջ, գնում եմ դեպի մարդը լայն բացված թեւերով ու շատ հարվածներ ստանում եմ, բայց չեմ ուզում հավատալ, որ վատն ավելի շատ է: Ինձ համոզեք հակառակը: Ես պրել եմ ուզում...»*:

Օ՜, աստվածային հուշում... այո, որոնել մեր հոգու մեջ մեր նախասկիզբը, արարչական լույսի փոքրիկ-փոքրիկ այն շյուղը, որ մեզ տրված է իբրեւ փրկություն՝ գտնելու տունդարձի ճանապարհը, դեպի աղբյուրը Լույսի...

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԳԱԼՅԱՆ

Լուվրի «բարեարտությունը» անգլախոսների հանդեպ

Լուվրի մշտական ցուցադրությունները կազմող ցուցանմուշների 80 տոկոսի մասին լուսանկարներ ու մանրակրկիտ տեղեկություններ ստանալու հնարավորություն է ընձեռել թանգարանի ղեկավարությունը նաեւ անգլախոս արվեստասերներին. ինչպես տեղեկացնում է The New York Times-ը, հուլիսի 30-ից գործում է թանգարանի ինտերնետային կայքի անգլերեն տարբերակը նույնպես: Այն կազմվել է «Լուվրի ամերիկացի ընկերներ» կազմակերպության ֆինանսավորմամբ, որը տրամադրել է 380 հազար եվրո:

Համաձայն վիճակագրության, աշխարհում ամենից շատ այցելու ունեցող թանգարանի տարեկան 8,5 միլիոն այցելուների շարքում ամենից մեծ թիվը կազմում են ԱՄՆ քաղաքացիները:

Ն. Պ.

ՇՎԵԴԱՀԱՅ ԿՅԱՆՔ

Պողոս Արո՝ ռեժիսորից թարգմանիչ

Օրեր առաջ, Ազգային գրադարանում կայացավ Պողոս Արոյի (Արոյան) հայ-շվեդական եւ շվեդ-հայկական բառարանների շնորհանդեսը, որի մասին «Ազգը» արդեն տեղեկացրել է: Իսկ այժմ մեր ընթերցողներին եմ ներկայացնում Պողոս Արոյի հետ հարցազրույցը, որը կայացավ երեկ, երբ նրանք ընտանիքով (կինը եւ երկու զավակները) Երեւանում էին:

Շվեդիայում՝ հայերի առաջին ալիքը սկսել է բնակություն հաստատել լիբանանյան պատերազմի ժամանակ 70-ական թվականների սկզբին, ու եղած մի քանի տասնյակ ընտանիքները համայնքային գործունեություն մինչեւ այդ չեն ծավալել: Իսկ լիբանանահայերի խոսքից հետո սկսել են գործել ակումբներ ու ձեւավորվել է հայկական համայնք: Այնուհետեւ 79-ից համայնքին են միանում Իրանի հեղափոխության հետեւանքով գաղթած շատ ընտանիքներ ու համայնքը խոշորանում է: Նրանք մեծամասամբ պրում են Ուպսալա քաղաքում, որը համարվում է Շվեդիայի չորրորդ խոշոր քաղաքը, որտեղ հիմնականում մեծ թվով համալսարաններ են գործում: Իսկ այսօր հայերի ամենամեծ համայնքը կենտրոնացված է Ստոկհոլմում: Տարիներ առաջ, Իրաքի պատերազմի պատճառով, 3-րդ ալիքը մուտք գործեց Շվեդիա: Վերջին երկու տարիներին համայնքը համալրվեց նաեւ Սիրիայից հայկական ընտանիքների հոսքով: Խորհրդային Միության փլուզման պատճառով նաեւ Հայաստանից շատ ընտանիքներ թողեցին իրենց տունտեղը եւ միացան շվեդական համայնքին: Այժմ Շվեդիայում գործում է մի քանի հայկական ակումբներ Ստոկհոլմում, Ուպսալայում, Գյոթեբորգում եւ Մալբյոյում: Հրատարակվում է «Հորիզոն» ամսաթերթը (խմբագիր՝ Ջիակոնդա Միրզախանյան) պատմում էր Պողոս Արոն: Իսկ թե ինչպե՞ս եղավ, որ Սիրիայում ծնված, Երեւանի գեղարվեստա-թատերական ինստիտուտի ռեժիսուրայի ֆակուլտետն ավարտած (Ռաֆայել Զրբաշյանի ղեկավարությամբ) Պողոս Արոյանը հայտնվեց Շվեդիայի Վեստերոս քաղաքում, պարզաբանումներ տվեց: «Այժմ ես պրում եմ Ստոկհոլմում, իսկ ինստիտուտը ավարտելուց հետո արդեն 20 տարի է, որ պրում եմ Շվեդիայում: Սկզբում Վեստերոսում մոտ 4 բեմադրություն եմ իրականացրել տեղի կիսապրոֆեսիոնալ, կիսասիրողական թատրոնում: Դրանք էին՝ Յուջին Օ' Նիլի «Սերը ծփիների տակ», Էդուարդ Մոլդիի «Դեռք կենդանաբանական այգում», Գրիգորի Գորինի «Մոռանալ Հերոստրատին» եւ Պուշկինի ողբերգություններից «Մոցարտ եւ Սալիերի»:

- Իսկ այժմ բացի հայ-շվեդական ու շվեդ-հայկական բառարանից, շվեդերենից, արաբերենից թարգմանություններ անելուց ի՞նչ նոր ծրագրեր ունեք:

- Գրել եմ մի սցենար ֆիլմի համար, որը եւ վավերագրական է լինելու եւ մի փիչ էլ խաղարկային: Սցենարը մի տիկնոջ մասին է՝ Ալմա Յուհանսոնի, որը շվեդուհի է ու 20-րդ դարի սկզբներին պրել եւ աշխատել է Արեւմտյան Հայաստանում, Մուշի շրջակայքում, ու ականատեսի տպավորությունները, հայ գաղթականների որբանոցներում ծվարած կյանքին, եղեռնին, ու այդ բոլորը զետեղել է մի գրքույկում. «Մի ժողովուրդ, մի ազգ աֆսորում» վերնագրով: Եվ երբ կարդացի այդ գրքույկը, սկսեցի այցելել Ստոկհոլմի արխիվները ու այնտեղից գտա 1911-15 թթ. Ալմա Յուհանսոնի Շվեդիա ուղարկած նամակները, որոնցում նկարագրված է, թե ինչպիսի վայրագություններ են իրականացնում թուրքերը հայերի դեմ, ու դրանց հիման վրա գրեցի կինո սցենար:

- 10 տարի է այդ սցենարը գրել եք, ինչո՞ւ չեք իրականացրել, ի՞նչն է պատճառը:

- Շատ էի ուզում, սակայն պատճառը միայն ֆինանսներն են: Եթե գտնվեն հովանավորներ՝ Հայաստանից կամ այլ երկրներից, ապա ես անմիջապես կսկսեմ նկարահանումները: 1000 հայ ընտանիքների այդ կինը փրկել է թուրքի յաթաղանից եւ մեր՝ հայերիս պարտքն է արժանին հատուցել թե՛ Ալմա Յուհանսոնի հիշատակին, եւ թե՛ Շվեդիային՝ տարբեր տարիներին իր երկրում ապաստան տված հայ ընտանիքներին օգնելու համար:

Կարծում եմ, Մեծ եղեռնի 95-ամյակի առիթով այդ ֆիլմի նկարահանումը շատ կարեւոր դեր ու նշանակություն կունենա: Հուսամ, որ կգտնվեն մեկենասներ եւ կաջակցեն թե՛ պետական կառույցներից եւ թե՛ անհատներից:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Առաջին անգամ կբացվի դա Վինչիի «Ատլանտյան կոդեքս» հավաքածուի ցուցադրությունը

Լեոնարդո դա Վինչիի ձեռագրերի ու կտավների հսկայական հավաքածուն, որ հայտնի է «Ատլանտյան կոդեքս» (Codex Atlanticus) անվամբ, Միլանում առաջին անգամ կներկայացվի հասարակությանը: Ատլանտյան կոդեքսը կազմում է 1119 էջ՝ հավաքված 12 հատորում: Ըստ մասնագետների, «Ատլանտյան կոդեքսում» ընդգրկված են 1478-1518թթ. (մեկ տարի անց Լեոնարդո դա Վինչին մահացավ) ստեղծագործությունները:

24 խմբի բաժանված հավաքածուի ցուցանմուշները կցուցադրվեն առանձին: Խմբում ընդգրկված է 50 աշխատանք: Յուրաքանչյուրի ցուցադրության համար նախատեսված է 3 ամիս: Ցուցադրության բացման արարողությունը տեղի կունենա Միլանում սեպտեմբեր ամսին, իսկ փակման արարողությունը նախատեսված է 2015-ին:

Մինչ վեցամյա ցուցադրության մեկնարկը, հուլիսի 18-ից օգոստոսի 30-ը Միլանի Մարինո դղյակում կբացվի անվճար ցուցադրություն, որտեղ ներկայացված են նաեւ իտալացի աշխարհահռչակ նկարչի երկու ստեղծագործություններ:

«Ատլանտյան կոդեքսի» նկարներն ու ձեռագրերը բացահայտում են Լեոնարդո դա Վինչիի հետաքրքրությունները ոչ միայն արվեստի այլեւ գիտության տարբեր՝ աերոդինամիկա, երաժշտություն, մաթեմատիկա, բնագիտություն, ռազմագիտություն եւ այլ ասպարեզների նկատմամբ:

Ներկա դրությամբ յուրաքանչյուր հավաքածուի ցուցանմուշները գտնվում են Միլանի Ամբրոզիանյան գրադարանում: Միայն 2008-ին հայտնի դարձավ, որ մասնագետները որոշել են հավաքածուն բաժանել մի քանի մասի՝ վերականգնման մտադրությամբ: Վերջին անգամ ցուցանմուշները վերականգնվել են նախորդ դարի 60-ականներին:

1986-ին Նյու Յորքի Մետրոպոլիտեն թանգարանի աշխատակիցը հայտարարեց, որ Ատլանտյան կոդեքսի էջերում հայտնաբերել է բորբոսի հետքեր: Հետագայում պարզ դարձավ, որ գունավոր հետքերն առաջացել են սնդիկից եւ աղից, որոնք պատրաստանում էին կտավները բորբոսից:

ՀԱՄԱՐԿ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

AZG NEW 7.QXD 7/31/2009 10:07 PM Page 1

Երեւանում առաջին անգամ կանցկացվեն համահոմենընդմենական խաղեր

Օգոստոսի 1-8-ին Երեւանում առաջին անգամ կանցկացվեն համահոմենընդմենական մարզական խաղերը, որոնք թվով 8-րդն են: Խաղերին կմասնակցեն 500-ից ավելի մարզիկներ աշխարհի 15 երկրներից, ինչպես նաեւ Իրանի հայ մշակութային «Արարաս» կազմակերպության անդամները: Այս մասին երեկ «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցում կազմակերպված մամուլի ասուլիսին տեղեկացրին Հայաստանի ազգային սպառուական շարժման ատենապետ **Հրաչյա Շմավոնյանը**, ՀՄԸՄ-ի կենտրոնական վարչության անդամ եւ խաղերի պատասխանատու **Միհրան Շիմշիրյանը** ու Արեւմտյան Ամերիկայի ներկայացուցիչ **Մանվել Մարսելյանը**:

Հայ Մարմնակրթական ընդհանուր միությունը (ՀՄԸՄ) մարզական եւ սպառուական կազմակերպություն է, որը հիմնադրվել է 1918-ին Կոստանդնուպոլսում: Հարում է ՀՅԴաշնակցությանը: ՀՄԸՄ-ն 91 տարի շարունակ ծառայել է հայ երիտասարդության մտավոր եւ ֆիզիկական զարգացմանը: Միության նշանաբանն է «Բարձրացիր, բարձրացրու»: Այսօր ՀՄԸՄ-ն աշխարհի 25 երկրներում ունի 100 մասնաճյուղ եւ 25 հազարից ավելի անդամներ: Հայաստանում միության ակտիվ անդամների թիվը 2000 է:

ՀՄԸՄ-ի կենտրոնական վարչության հովանավորությամբ կազմակերպվող համահոմենընդմենական առաջին խաղերը կայացել են 1981-ի հունիսի 26-ից հուլիսի 5-ը Կանադայում: Այնուհետեւ 4 տարին մեկ խաղերն անցկացվել են ԱՄՆ-ում (2 անգամ), Ֆրանսիայում, կրկին Կանադայում, Լիբանանում եւ Հունաստանում: Եվ ահա առաջին անգամ խաղերի մասնակիցները ժամանել են Հայաստան, ինչը հնարավորություն կտա նրանց ծանոթանալու մայր հայրենիքին: Խաղերի ծրագրում ընդգրկված է 5 մարզաձեւ՝ սեղանի թենիս, լող, բասկետբոլ, ֆուտբոլ եւ շախմատ: Հայաստանի մարզիկները հանդես կգան երեք մարզաձեւում՝ լողում, շախմատում եւ սեղանի թենիսի մրցումներում: Պատճառն այն է, որ 1995-ից հետո Հայաստանում ՀՄԸՄ-ն մարզական թեւ չունի, ուստի թիմեր չեն գործում: Հաղթողները կպարգեւատրվեն մեդալներով ու հուշագավաթներով, իսկ թիմային հաշվարկով լավագույն արդյունքի հասած երկրի պատվիրակներին կհանձնվի ՀԱՕԿ-ի փոխանցիկ գավաթը:

Խաղերի հանդիսավոր բացումը տեղի կունենա այսօր, ժամը 20-ին, Հանրապետության հրապարակում: Բացման արարողությունն իր մեջ ներառում է նաեւ համերգային մաս: Իսկ օգոստոսի 8-ին, ժամը 4-ին Երեւանի «Դինամո» մարզասրահում տեղի կունենա խաղերի փակման արարողությունը, որի ժամանակ աչքի ընկած մարզիկները կպարգեւատրվեն:

Բնականաբար, մասնակիցների համար նաեւ մշակութային ծրագիր է նախապատրաստված: Օգոստոսի 5-ին նրանք կայցելեն Սեւան, հաջորդ օրը կկազմակերպվի դասախոսություն «Հայ դաս» թեմայով, որից հետո մասնակիցները կուղեւորվեն Ծիծեռնակաբերդ՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելու Մեծ եղեռնի զոհերի հիշատակին:

«Մեսալուրգը» շարունակեց հաղթարշավը

Կայացան ֆուտբոլի Եվրոպայի լիգայի որակավորման 3-րդ փուլի առաջին հանդիպումները: Հայ ֆուտբոլասերներին այս մրցաշրջանում առաջին հերթին հետաքրքրում են Դոնեցկի «Մեսալուրգի» մասնակցությամբ հանդիպումները, որում խաղում են Հենրիխ Մխիթարյանն ու Արարաս Առաքելյանը: «Մեսալուրգը» սեփական հարկի տակ 2-0 հաշվով հաղթեց Սլովենիայի «Ինտերբլոկին»: Դաշտի տերերի առավելությունը ողջ խաղի ընթացքում զգալի էր, որոնք գոլային մի շարք պահեր ստեղծեցին, սակայն իրացրին միայն երկուսը, այն էլ ստանդարտ իրադրությունները: 20-րդ րոպեին տուգանային հարվածով հաշիվը բացեց Ալեքսեյ Գոդինը, իսկ ընդմիջումից քիչ անց Մարիո Սերժիուն իրացրեց 11 մ հարվածը: «Մեսալուրգի» կազմում ողջ հանդիպմանը մասնակցեց Հենրիխ Մխիթարյանը, իսկ Արարաս Առաքելյանը նույնիսկ հայտավորված չէր խաղին:

Կարծում ենք, հայ ֆուտբոլասերները նախանձով են հետեւում մեր հարեւանների՝ վրացիների եւ ադրբեջանցիների ելույթներին, որոնք շարունակում են հաղթանակներ տոնել եվրոպական մրցաստարեզում: Կրկին մեծ անակնկալ մատուցեց ադրբեջանական «Ղարաբաղը», որը հյուրընկալվելիս 1-0 հաշվով պարտության մատնեց ֆիննական «Հոնկային»: Թբիլիսիի «Դինամոն» էլ սեփական հարկի տակ 2-0 հաշվով հաղթեց Սերբիայի «Ցրվենա Զվեզդային»:

Ընդհանրապես նախկին ԽՍՀՄ հանրապետությունների ակումբները վաս հանդես չեկան: Խարկովի «Մեսալիսը» հյուրընկալվելիս 2-1 հաշվով հաղթեց խորվաթական «Ռիեկային»: Անհաջողության մատնվեցին միայն Սամարայի «Կռիլյա Սովետովն» ու լիտվական «Վետրան»: Ռուսական ակումբը հյուրընկալվելիս 0-1 հաշվով զիջեց իռլանդական «Սենտ Պատրիկսին», իսկ լիտվացիները սեփական հարկի տակ խոշոր հաշվով զիջեցին անգլիական «Ֆուլհեմին» (0-3):

«Միկայի» նախկին մրցակից շվեդական «Հելսինգբորգը» սեփական հարկի տակ 2-1 հաշվով հաղթեց Բոսնիայի «Սարաեւոյին»: Ներկայացնենք եւս մի քանի հետաքրքրական արդյունքներ. «Ռոմա» (Իտալիա)-«Գենտ» (Բելգիա)՝ 3-1, «Էյնդհովեն» (Հոլանդիա)-«Զեռնո Մորե» (Բուլղարիա)՝ 1-0, «Ռանդերս» (Դանիա)-«Համբուրգ» (Գերմանիա)՝ 0-4, «Աբերդին» (Շոտլանդիա)-«Սիգմա» (Չեխիա)՝ 1-5, «Ռաբոտնիչկի» (Մակեդոնիա)-«Օդենսե» (Դանիա)՝ 3-4, «Սեւոյնո» (Սերբիա)-«Լիլ» (Ֆրանսիա)՝ 0-2:

Առջեւում աշխարհի առաջնությունն է

Հայաստանի հունահռոմեական եւ ազատ ոճի ըմբշամարտի երիտասարդական հավաքականները կմասնակցեն օգոստոսի 3-ին Թուրքիայի Անկարա քաղաքում մեկնարկող մարզաձեւի աշխարհի երիտասարդական առաջնությանը: Առաջինն իրենց հարաբերությունները կպարզեն հունահռոմեական ոճի ըմբիշները: Հայաստանն այդ մրցումներում կներկայացնեն Սարգիս Խաչատրյանը (50 կգ), Ալեքսան Միխայելյանը (55 կգ), Գեւորգ Գեւորգյանը (60 կգ), Հովհաննես Վարդերեսյանը (66 կգ), Էդուարդ Սարգսյանը (74 կգ) եւ Արթուր Ալեքսանյանը (84 կգ):

Ազատ ոճայիններն մրցապայքարում Հայաստանից մրցագորգ դուրս կգան Մաթեւոս Սարոյանը (50 կգ), Օհան Գեղիկյանը (55 կգ), Գառնիկ Մնացականյանը (60 կգ), Արթուր Մալխասյանը (66 կգ) եւ Հայկ Կարապետյանը (74 կգ): Հիշեցնենք, որ Թբիլիսիում կայացած Եվրոպայի երիտասարդական առաջնությունում հայ ըմբիշներն ընդամենը մեկ բրոնզե մեդալ էին նվաճել:

Տոտին 5 տարով կերկարաձգի պայմանագիրը

Իտալական «Ռոմայի» ավագ ֆրանչեսկո Տոտին շուտով ակումբի հետ նոր պայմանագիր կկնքի 5 տարի ժամկետով: Այսպիսով, նա «Ռոմայում» կխաղա մինչեւ 38 տարեկան հասակը: Տոտին ներկայումս «Ա» սերիայում հանդես եկող ֆուտբոլիստներից ամենաարդյունավետն է: Նա խփել է 178 գոլ եւ առաջիկա 5 տարիներին հնարավորություն ունի զգալիորեն բարելավելու իր ցուցանիշը: Նոր մրցաշրջանում Տոտիի տարեկան աշխատավարձը կկազմի 5 մլն եվրոյից մի փոքր ավելի: «Հուսով եմ, որ 5 տարի անց մենք կրկին կհանդիպենք «Ռոմայի» մարզաբազայում եւ ես կհայտնեմ իմ որոշման մասին՝ շարունակել ելույթներս, մնալ ակումբում որպես աշխատակից, թե այլ տարբերակ ընտրել: Իսկ առայժմ ցանկությունս է ֆուտբոլ խաղալ եւ գերազանցել իտալական ֆուտբոլի արդյունավետության բոլոր ռեկորդները: Իմ նպատակն է դառնալ առաջնության լավագույն ռմբարկու: Եթե ես շատ խաղերի մասնակցեմ, ապա դա ինձ կհաջողվի», նշել է Ֆրանչեսկո Տոտին:

ԽԵԼԱՄԻՏ ՈՐՈՇՈՒՄ

ՀՖՖ գործկոմն ընդառաջեց «Արարատին»

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի արտոնագրման կոմիտեի նիստում միաձայն որոշվել էր Երեւանի «Արարատին» զրկել առաջնությանը մասնակցելու իրավունք ընձեռող արտոնագրից: Ըստ արտոնագրման բաժնի պետ Առնո Սարգսյանի՝ «Արարատ» ֆուտբոլային ակումբը խախտել է ՀՖՖ ակումբների արտոնագրման ուղեցույցի համապատասխան հոդվածի կետերը: Ըստ դրանց, ազգային արտոնագիր ստանալու համար յուրաքանչյուր ակումբ պետք է առնվազն 4 մանկապատանեկան թիմ ունենա, որոնք մասնակցեն ՀՖՖ հովանու ներքո անցկացվող մանկապատանեկան առաջնություններին:

Ընթացիկ մրցաշրջանում «Արարատը» մանկապատանեկան առաջնություններում ներկայացնում էին 5 թիմեր, որոնցից 3-ը՝ «Արարատ-95»-ը, «Արարատ-96»-ը եւ «Արարատ-97»-ը ՀՖՖ կարգապահական կոմիտեի որոշմամբ հանվել են առաջնությունից՝ երկու եւ ավելի անգամ մրցավայր չներկայանալու պատճառով: Ուստի «Արարատը» զրկվել էր արտոնագրից: «Արարատը» 5 օրվա ընթացքում կարող էր բողոքարկել որոշումը:

Եվ այսպես, «Արարատը» կանգնած էր առաջնությունից հեռացվելու վտանգի առջեւ: Բարեբախտաբար, երեկ կայացած ՀՖՖ գործկոմի նիստում անդամները եւս մեկ անգամ ընդառաջեցին «Արարատին»՝ հնարավորություն ընձեռելով թիմին շարունակելու ելույթներն առաջնությունում:

Հաջող սկիզբ, տխուր վերջաբան

Լեւոն Արոնյանին չհաջողվեց պահպանել Ֆիշերի շախմատի վարկածով արագ շախմատի աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Մայնցում անցկացվող մրցաշարը նա շատ հաջող սկսեց, սակայն վճռորոշ հանդիպումներն անհաջող անցկացրեց: 4 պարտիայից բաղկացած եզրափակիչ մրցախաղում Արոնյանը 0,5-3,5 հաշվով զիջեց ԱՄՆ-ում բնակվող ճապոնացի գրոսմայստեր Հիկարու Նակամուրային ու զրկվեց չեմպիոնությունից: Առաջին երեք պարտիաներում ճապոնացին հաղթեց, չորրորդում գրանցվեց ոչ-ոքի:

Բրոնզե մեդալի համար պայքարում հաջող խաղաց Սերգեյ Մովսիսյանը: Նա 2,5-1,5 հաշվով պարտության մատնեց Վիկտոր Բոլոգանին:

Այժմ Լեւոն Արոնյանին նոր փորձություն է սպասում դասական արագ շախմատի աշխարհի առաջնությունում, որում նրա մրցակիցներն են աշխարհի չեմպիոն Վիշվանաթան Անանդը, Արկադի Նայդիչը եւ Յան Նեպոմնյաչնին:

Ռուս մարզիկներն Իսպանիայում ծեծի են ենթարկվել

Իսպանիայում Ռուսաստանի RuS7 առագաստանավային սպորտի թիմի երեք անդամներ՝ Դենիս Ռոժկովը, Նիկիտա Խրեկովը եւ Ռոման Կոնստանտինովը տեղի ոստիկաններ-ի կողմից դաժան ծեծի են ենթարկվել, որից հետո կալանավորվել են եւ ամբողջ օրն անցկացրել են խցում:

Ըստ մարզիկների, նրանք իսպանական Պալմա քաղաքում երեկոյան մարզումներից վերադառնում էին հյուրանոց, երբ նրանց վրա են հարձակվել ոստիկանները եւ սկսել են մահակներով դաժանաբար ծեծել: Այնուհետեւ ձեռնաշղթաներով տարել են ոստիկանական բաժանմունք, առգրավել են փողերն ու փաստաթղթերը եւ մեղադրանք են հարուցել, թե իբր ռուս մարզիկները հարձակվել եւ ծեծել են 8 ոստիկանի:

RuS7 թիմի ղեկավարությունը դեպքի մասին անմիջապես տեղյակ է պահել մրցումների կազմակերպիչներին՝ խնդրելով աջակցել ռուս մարզիկների վրայից կեղծ մեղադրանքները հանելու: Միջադեպով զբաղվում է նաեւ Իսպանիայում Ռուսաստանի դեսպանությունը:

Միրումյանի 4-րդ հաղթանակը

Չեխիայում ընթացող շախմատի մրցաշարի 7-րդ տուրում Վիգեն Միրումյանը սեւերով հաղթեց Վոյտեկ Կովարին եւ վաստակեց 4,5 միավոր: Աղյուսակը 6-ական միավորով գլխավորում են Անտոն Կորոբովը, Դմիտրի Մախիմովը, Վյաչեսլավ Զախարցովը, Վիկտոր Լազնիչկան եւ Մարտին Կրավցիվը: Կորոբովը հաղթեց Վոկատուրոյին, Զախարցովն առավելության հասավ Դենիս Ռոմբալտոնիի նկատմամբ, Կրավցիվը պարտության մատնեց Կատրին Շկինկեին: Մախիմով-Լազնիչկա պարտիան ավարտվեց ոչ-ոքի:

Հայտարարություն

Համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի 2009 թվականի հուլիսի 31-ի թիվ 1/966-Ա որոշման՝ 2009 թվականի օգոստոսի 5-ից բանկի մասնաճյուղի կառավարչի եւ բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահի պաշտոններում աշխատելու համար թեկնածուների մասնագիտական համապատասխանության ստուգման քննությունները անցկացվելու են Հայաստանի բանկերի միության կողմից:

2009 թվականի օգոստոսի 3-ից բանկի մասնաճյուղի կառավարչի եւ բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահի պաշտոններում աշխատելու համար թեկնածուների մասնագիտական համապատասխանության ստուգման քննությունների համար թեկնածուները դիմումները պետք է ներկայացնեն Հայաստանի բանկերի միություն՝ Երեւան 0009, Կորյունի 19ա հասցեով (էլ. փոստ uba@uba.am, հեռախոս 52 77 31):

ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն

AZG NEW 8.QXD 7/31/2009 9:30 PM Page 1

ԱԶԳ

Տանուցում

Համաշխարհային հայկական կոնգրեսը եւ Ռուսաստանի հայերի միությունը հայտարարում են 2009 թ. ստեղծագործական եւ գիտական լավագույն աշխատանքի

ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

Արդեն բարի ավանդույթ է դարձել Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության կողմից անցկացվող գիտական եւ ստեղծագործական աշխատանքների ամենամյա մրցանակաբաշխությունը: Այն կազմակերպվում եւ անց է կացվում ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, Հայաստանի գրողների, ժուռնալիստների, նկարիչների, կոմպոզիտորների եւ երաժշտագետների միությունների հետ համատեղ:

Մրցանակաբաշխության նպատակն է՝ նպաստել Հայաստանի գիտական եւ ստեղծագործական մտավորականության գործունեության ակտիվացմանը, աջակցել երկրի մտավոր կյանքի աշխուժացմանը:

«Մրցանակաբաշխություն-2009» արդեն դարձել է համահայկական նշանակության միջոցառում, որին կարող են մասնակցել նաեւ հայկական սփյուռքի մտավորականության ներկայացուցիչները: Այն անց է կացվում ՀՀ սփյուռքի, ՀՀ կրթության եւ գիտության, ՀՀ մշակույթի նախարարությունների հետ համագործակցությամբ ու նրանց աջակցությամբ:

«Մրցանակաբաշխություն -2009» նվիրվում է Ռուսաստանի հայերի միության ստեղծման տասնամյա հոբելյանին, որը կնշվի 2010 թվականին Մոսկվայում:

Մրցանակաբաշխության ընդհանուր ֆոնդը կազմում է 81500 ԱՄՆ դոլարին համարժեք հայկական դրամ:

Մրցանակաբաշխության պայմանները

Գիտնականների համար.

«Լավագույն գիտական աշխատանք» մրցույթում սահմանված են 5 մրցանակներ 5 անվանակարգերում՝

▼ հայագիտություն
▼ հասարակական գիտություններ
▼ ճշգրիտ գիտություններ
▼ ինֆորմատիկա եւ տեխնիկական գիտություններ
▼ բնական գիտություններ

Մրցանակային ընդհանուր ֆոնդը կազմում է 20000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

Մրցանակակիրները կպարգեւատրվեն 4000-ական ԱՄՆ դոլարին համարժեք դրամով եւ կարժանանան ՀՀ ԳԱԱ, ՀՀԿ եւ ՌՀՄ պատվավոր դիպլոմի: Մրցույթին կարող են ներկայացվել միայն 2008 թ. հրատարակված կամ արտասահմանում պատենտավորված աշխատանքները:

Փաստաթղթերի ներկայացումը 2009թ. հոկտեմբերի 15-ից մինչեւ դեկտեմբերի 30-ը: Մրցույթի արդյունքները կհայտարարվեն 2010թ. ապրիլին:

Հայտատուն կարող է իր աշխատանքը ներկայացնել անձամբ կամ այն կարող է ներկայացվել տվյալ բնագավառում գործող որեւէ հասատության միջոցով:

Ներկայացման համար անհրաժեշտ փաստաթղթերը կարելի է ստանալ ՀՀ ԳԱԱ «Գիտության զարգացման հիմնադրամի» գրասենյակից կամ Հիմնադրամի կայքի միջոցով http://sdfund.sci.am.

Հասցեն: Մարշալ Բաղրամյանի պող. 24, ՀՀ ԳԱԱ:
Հեռ. 527530, 527031:

Գրողների համար.

Թեման՝ «Հայ արձակ. 21-րդ դար», վեպ, վիպակ, պատմվածքաշար անվանակարգերով:

Բոլոր տեքստերը պետք է լինեն անտիպ եւ ներկայացվեն ծածկանունով:

Հայտարարված մրցանակաբաշխությանը կարող են մասնակցել ինչպես Հայաստանի, այնպես էլ սփյուռքի գրողները:

Մրցանակային ընդհանուր ֆոնդը կազմում է 15000 ԱՄՆ դոլարին համարժեք հայկական դրամ:

Նախատեսված են հետեւյալ մրցանակները.

▼ Վեպի համար (նվազագույն ծավալ՝ 80 համակարգչային էջ) $7000
▼ Վիպակի համար (նվազագույն ծավալ՝ 50 համակարգչային էջ) $4000
▼ Պատմվածքաշարի համար (մինչեւ 40 համակարգչային էջ) $3000:

Ներկայացման վերջին ժամկետը՝ 2010 թ. մայիսի 31-ը:

Հասցե՝ Մարշալ Բաղրամյանի պող. 3, Հայաստանի գրողների միություն

Հեռ. 563811:

Լրագրողների համար.

Թեման՝ «Աշխարհի հետ՝ մեր ինքնությամբ. Հայաստանը համայն հայության հայրենիքն է»:

Մրցույթի նյութերը պետք է արտացոլեն հայրենիք-սփյուռք, սփյուռք-սփյուռք գործակցությունները, նպաստեն հայապահպանությանը, ներկայացնեն սփյուռքահայերի գործունեությունը, ինչպես նաեւ մայր հայրենիքի հետ համագործակցության ամրապնդումը:

Ռուսաստանի հայերի միության տասնամյա հոբելյանի առթիվ հրապարակված նյութերը պետք է լուսաբանեն անցած տասը տարիների ընթացքում այդ միության ծավալած ազգաշահ գործունեությունը՝ միտված հայապահպանությանը, Ռուսաստանում բնակվող հայերի իրավունքների ու շահերի պաշտպանությանը, կրթական, մշակութային ձեռնարկներին:

Մրցանակային ընդհանուր ֆոնդը կազմում է 16500 ԱՄՆ դոլարին համարժեք հայկական դրամ:

Սահմանվում են հետեւյալ մրցանակները.

պարբերական մամուլ՝ երկու մրցանակ	$2000 եւ $1000
հեռուստահաղորդումներ՝ երկու մրցանակ	$2000 եւ $1000
ռադիոհաղորդումներ՝ մեկ մրցանակ	$1000
ցանցային ԶԼՄ-ներ՝ մեկ մրցանակ	$1000
սփյուռքահայ մամուլ՝ մեկ մրցանակ	$1000

Ռուսաստանի հայերի միության տասնամյակին նվիրված նյութեր

Ռուսաստանի հայերի միության գործունեությունը լուսաբանող

հեռուստաֆիլմ՝ մեկ մրցանակ	$2500
պարբերական մամուլ՝ մեկ մրցանակ	$2000
հեռուստահաղորդումներ՝ մեկ մրցանակ	$2000

Մրցույթին կարող են մասնակցել ՀԺՄ անդամները, Հայաստանի եւ սփյուռքի լրատվամիջոցները:

Նյութերի ներկայացման վերջին ժամկետը 2010 թ. մայիսի 31-ն է:

Մրցույթի նյութերը ուղարկել Երեւան, Պուշկինի 3ա, Հայաստանի ժուռնալիստների միություն
Հեռ, 56-12-76

Նկարիչների համար.

Կերպարվեստի լավագույն ստեղծագործությունների մրցույթը նպատակաուղղված է հայ կերպարվեստի զարգացմանը եւ անհատ ստեղծագործողին խրախուսելուն:

Նախատեսված է 15000 ԱՄՆ դոլարին համարժեք հայկական դրամ մրցանակային ֆոնդ, որից $2000 կտրամադրվի կատալոգի հրատարակմանը:

Սահմանվում են մրցանակներ հետեւյալ անվանակարգերով՝

գեղանկարչություն՝ 5 մրցանակ x $1600 = $8000
քանդակ՝ 2 մրցանակ x $1200 = $2400
գրաֆիկա՝ 2 մրցանակ x $800 = $1600
դեկորատիվ-կիրառական արվեստ՝ 1 մրցանակ = $1000
Ընդամենը՝ $13000

Հանձնաժողովը իրեն իրավունք է վերապահում մրցանակային ֆոնդը վերաբաշխել այլ կերպ՝ ըստ փաստացի արդյունքների:

Մրցույթի արդյունքները կամփոփվեն 2010 թ.-ին Եղեռնի 95-ամյակին նվիրված ցուցահանդեսի ընթացքում:

Հասցե՝ 0001, Աբովյան 16, Հայաստանի նկարիչների միություն
Հեռ.՝ 564724

Կոմպոզիտորների եւ երաժշտագետների համար.

Լավագույն կոմպոզիտորական եւ երաժշտագիտական ստեղծագործությունների մրցույթին կարող են մասնակցել ինչպես Հայաստանում, այնպես էլ սփյուռքում ապրող հայ կոմպոզիտորներ եւ երաժշտագետներ, ովքեր ունեն պրոֆեսիոնալ երաժշտական կրթություն:

Կոմպոզիտորական արվեստի ասպարեզում՝

Հայ ժամանակակից կոմպոզիտորական արվեստի ստեղծագործական ձեռքբերում

Ներկայացվում են ստեղծագործություններ, գրված հետեւյալ ժանրերում

ա.- Վոկալ-սիմֆոնիկ, կոնցերտային երաժշտության ժանրում գրված ստեղծագործության (5-20 րոպե) մրցանակային ֆոնդը կազմում է $3500,

բ. - Գործիքային անսամբլների համար (դուետ, տրիո, կվարտետ եւ այլն) գրված ստեղծագործության (12-15 րոպե) մրցանակային ֆոնդը կազմում է $3000,

գ. - Խմբերգային, վոկալ-գործիքային երաժշտության ժանրում գրված ստեղծագործության (8-10 րոպե) մրցանակային ֆոնդը կազմում է $2000

Երաժշտագիտության ասպարեզում՝

Հայ երաժշտության զարգացման նոր հեռանկարներ

Ներկայացվում են՝ գիտական հոդվածների ժողովածու, երաժշտական հրապարակախոսություն, մենագրություն: Սահմանված է $2500:

Սահմանված մրցանակային ֆոնդը, որը կազմում է 15000 ԱՄՆ դոլարին համարժեք հայկական դրամ, տրամադրվելու է մրցույթում առաջնության արժանացած գործերի հեղինակներին պարգեւատրելու, ինչպես եւ տվյալ ստեղծագործությունների կատարման ծախսերն ապահովելու նպատակին, ինչի համար սահմանված մրցանակային ֆոնդից կառանձնացվի 25% -ի չափով գումար:

Երաժշտագիտական աշխատություններն ընդունվում են հրատարակված օրինակի տեսքով:

Կոմպոզիտորական ստեղծագործություններն ընդունվում են կոմպյուտերական շարվածքի եւ/կամ բավարար ընթեռնելի ձեռագրի տեսքով:

Կարող է ներկայացվել նաեւ ստեղծագործության ձայնագրությունը՝ եթե այդպիսին առկա է:

Յուրաքանչյուր հեղինակից ընդունվում է մեկ գործ՝ մեկ անվանակարգում:

Մրցույթին չեն կարող ներկայացվել նախկինում մրցանակ շահած գործեր:

Աշխատանքների ընդունման ժամկետը մինչեւ 2010 թ. մարտի 31-ն է:

Աշխատանքներն ընդունվում են միության քարտուղարությունում:

Հասցե՝ Դեմիրճյան 25, Հայաստանի կոմպոզիտորների եւ երաժշտագետների միություն
Հեռ. 52-47-02

Ծանոթություն.

ա) Մրցանակակիրներին գումարները կվճարվեն հայտարարության մեջ նշված ԱՄՆ դոլարին համարժեք հայկական դրամով, տվյալ օրվա փոխարժույթով:

բ) Մրցույթներն անցկացնող կազմակերպությունները կարող են մրցույթի կազմակերպչական ծախսերի համար օգտագործել մրցանակային ֆոնդի մինչեւ 10%-ը, իսկ Կոմպոզիտորների միությունը, ելնելով ոլորտի առանձնահատկություններից, մինչեւ 25 տոկոսը:

Օգոստոսին իր դռները կբացի «Յունիբանկ»-ի նոր՝ «Զվարթնոց» մասնաճյուղը

Օգոստոսի կեսերից «Յունիբանկ»-ի նոր՝ «Զվարթնոց» օդանավակայանի ժամանման սրահում տեղակայված նույնանուն մասնաճյուղը կսկսի իր գործունեությունը: Նորաբաց մասնաճյուղը աշխատելու է շուրջօրյա, առանց հանգստյան օրերի: «Զվարթնոց» մասնաճյուղի հիմնական գործառույթը լինելու է «Յունիստրիմ» դրամական փոխանցումների համակարգի հաճախորդների սպասարկումը: Ուղեւորը գումարը մեկնելուց առաջ կարող է փոխանցել «Յունիստրիմ» համակարգով եւ ժամանելն ողես այն ստանալ: Մյուս կարեւոր գործոնը, դա արժույթի փոխանակման կետի առկայությունն է, որում փոխարժեքները սահմանվելու են «Յունիբանկ»-ի երեւանյան այլ մասնաճյուղերին համապատասխան:

«Յունիբանկ»-ի մասնաճյուղային ցանցի կազմավորման ծրագիրը ենթադրում է ոչ միայն նոր մասնաճյուղերի ստեղծում, այլեւ գործողների արդիականացում, սպասարկման միասնական ստանդարտների եւ կորպորատիվ ոճի ներդրում: Այսպես վերակառուցվում է մասնաճյուղերի ինչպես արտաքին տեսքը, այնպես էլ աշխատանքի կազմակերպման գործընթացը: Ձեւափոխումների հիմնական նպատակը սպասարկման սրահների բաժանումն է ըստ գործառույթների: Արդիականացման աշխատանքներն անց են կացվում առանց մասնաճյուղերի բնականոն աշխատանքային գրաֆիկի խախտման եւ հաճախորդներին անհարմարություններ պատճառելու:

Ներկայումս «Յունիբանկ»-ի մասնաճյուղային ցանցն ընդգրկում է 30 մասնաճյուղեր, որոնցից երկուսը՝ ԼՂՀ-ում: Մոսկվայում գործում է նաեւ բանկի ներկայացուցչությունը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից համակարգչային տեխնիկա, հարակից, ցանցային եւ ցուցադրման սարքավորումներ ձեռք բերելու նպատակով հայտարարված բաց մրցույթի կազմակերպման մասին

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է բաց մրցույթ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կարիքներն ապահովելու համար համակարգչային տեխնիկա, հարակից, ցանցային եւ ցուցադրման սարքավորումներ ձեռք բերելու նպատակով կազմակերպություններ ընտրելու համար:

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձիք, որոնք ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ:

Մրցութային առաջարկությունները անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյան փողոց 6:

Մրցութային հայտերի ընդունման վերջին ժամկետն է 2009թ. սեպտեմբերի 1-ը, ժամը 17-30:

Մրցույթի հայտերի բացման օրն ու ժամն է 2009թ. սեպտեմբերի 1-ը, ժամը 17-30:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2009թ. սեպտեմբերի 7-ին, ժամը 17-30:

Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու հրավերը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Տեղեկատվական եւ հեռահաղորդակցման տեխնոլոգիաների վարչություն:

Հասցե՝ 0010 Երեւան, Վազգեն Սարգսյան 6, հեռ. (+374 10) 56-75-02, 56-11-21, ներքին՝ 21-00

ԿԲ հասարակության հետ կապերի ծառայություն

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Կիլիկյան Հայաստան կրթամշակութային կենտրոն» հիմնադրամի 2008 թ. գործունեության մասին

Հիմնադրամը գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 11.12.2003 թվին, պետական գրանցման վկայական՝ 03Ա061796:
Գրանցման վայրը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա 26/3:
Հեռ.՝ 56-85-44, էլ. փոստ՝ cylicyanhayastan@mail.ru:
Գլխավոր տնօրեն՝ Ռոմիկ Հովհաննիսյան:
Իրականացված ծրագրեր՝ օգնություն սփյուռքի հայկական դպրոցներին, Հայաստան-Արցախ-սփյուռք կրթամշակութային կապերի զարգացում, հրատարակչական գործունեություն, ճանկավարժական կադրերի պատրաստում:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(հազար դրամ)

Հաշվետվությունն ընդգրկում է	01.01.2008 թ.	01.01.2009 թ.
Կանոնադրական ֆոնդ	10,0	10,0
Հիմնական միջոցներ	-	-
Ոչ նյութական ակտիվներ	-	-
Նյութեր	882,0	860,0
Տրված նախնական կանխավճար	-	-
Դրամական միջոցներ	488,0	352,0
Հաշվեկշիռ	1370,0	1212,0
Կուտակված շահույթ	(3033,0)	(3482,0)
Կերդիտորական պարտքեր գնումների գծով	117,0	117,0
Ստացված ընթացիկ կանխավճար	2082,0	2082,0
Կարճաժամկետ կրեդիտորական պարտք հիմնադրին	1496,0	1496,0
Կարճաժամկետ պարտք աշխատավարձի գծով	698,0	989,0
Հաշվեկշիռ	1370,0	1212,0
Մուտքեր	-	-
Ելք աշխատակիների կատարման եւ ծառայությունների մատուցման գծով	516,0	989,0
Վճարումներ սոցիալական ապահովագրության գծով	180,0	293,0
Հիմնադրամի կառավարման ոլորտում ընդգրկված անձանց կատարված վճարումներ	-	-

Գլխավոր տնօրեն Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, սպոնսորագրուած է տպագրութեամբ՝ 31.07.2009, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյյան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: